



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2028

ԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ



20

Ռ-ՏԻ

ԱՇԽԱՐՀԻ ՅՈՅՍԱԸ

20  
P-51

03 AUG 2008

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ԱՇԽԱՐՀԻ ՅՈՅՍԸ

Գրեց՝ Ճ. Ֆ. ՐԸԹՆԸՐՖՈՐՏ

Հեղինակը գրած է նաև՝

Ազատութիւն, վերջին Օրերը, Աստուծոյ Քնարը,  
Պատերազմ Թէ Խաղաղութիւն--Ո՞ր Մէկը,  
Ժողովուրդներուն Ազատութիւնը,  
և զև ուրիշ շատ մը գիրքեր ու գրքոյկներ,  
որոնցմէ շրջաբերութեան գրուած են աւելի քան  
110,000,000 օրինակներ, 52 տարբեր լեզուներով:

(“The Kingdom, The Hope of the World”—in Armenian)

Made in U. S. A.

Հրատարակիչ՝

Copyrighted 1931 and Published by  
**W A T C H T O W E R**  
BIBLE AND TRACT SOCIETY

International Bible Students Association  
117 Adams Street, Brooklyn, N. Y., U. S. A.

ՄԱՍՆԱՃԻՂԵՐ— Անդլիա, Գանատա, Գերմանիա, Զուիցերիա,  
Տանիմարդա, Աւստրալիա, Ափրիկէ, Էւայըն Էրկիրներ:

1932

ՆԱԽԱԲԱՆ

**ՎԵՐՋԻՆ ՅՈՅՍԸ:** Մարդիկ իրենց ծայր աստիճան յուսահատութեան պարագային անա ատոր կը փարին, ճիշդ ինչպէս որ խեղդուող մարդ մը յարդի շիւղին կը փարի: Բայց Քրիստոսի միջոցաւ յառաջ տարուելիք Աստուծոյ թագաւորութիւնը պարզ յարդի շիւղ մը չէ: Ան անբեկանելիօրէն զօրաւոր է, մարդուն ապահով նեցուկը, եւ յաւիտենական լեռներուն պէս անչարժ է: Ան ամենազործնական բանն է, եւ միա՛կ բանն է որ զործնական է մարդուն համար: Անիկա մարդուն ՄԻԱ՛Կ ՅՈՅՍԸ է:

Ո՛վ հայորդի, վերո՞յիշեալ իրական եւ մօտալուտ կառավարութեան հետ ծանօթացիր՝ կարգալով այս գրքոյիլը:

Հրատարակիչք

64054-67

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ԱՇԽԱՐՀԻ ՅՈՅՍԸ

**Ե**րբ երկրիս ժողովուրդներուն առջեւ կ'ելլէ կացութիւն մը՝ որ բուն իսկ իրենց գոյութեան կ'սպառնայ, այլեւս ժամանակն է անվերապահ եւ լուրջ խորհրդածութեան, որպէս զի, եթէ կարելի է, ատոր պատճառը ստուգուի եւ իրական դարմանը որդեգրուի: Յիմարութենէ ալ աւելի վատ բան է՝ հակահաստութիւն առաջ բերելէ վախնալով՝ նըկատի չառնել կամ հրապարակաւ չյուզել այդպիսի զժբախտ կացութիւն մը:

Ճշմարտութիւնը վիճելի չէ անոնց համար որ անկեղծ են: Ճշմարտութիւնը ի յայտ կը բերէ այն՝ ինչ որ ժողովուրդը պէտք ունի դիտնալու:

Երկրիս ազգերը ներկայիս խիստ պէտքը ունին ճշմարտութեան: Բէտիօն այն միջոցներէն մէկն է՝ զոր Տէրը հայթայթած է ճշմարտութիւնը ժողովուրդին ներկայացնելու համար, ու երկրիս վրայ եղած բէտիօյի բոլոր կայաններն ալ նախանձախընդիր պէտք է ըլլան ճշմարտութիւնը ժողովուրդին հեռարձակելու՝ աշխարհի պատմութեան ներկայ խիստ ծանրակշիռ ժամանակուան մէջ:

Ամերիկայի տնտեսական կացութիւնը խիստ ծանր է: Համանման մտահոգիչ կացութիւն մը կը տիրէ նաեւ ամբողջ «Քրիստոնեայ Աշխարհ»-ի, իրապէս, բովանդակ աշխարհի, մէջ: Կարգ մը անձինք հարստացած են, բայց միւս կողմէն չքաւորներուն թիւը կ'աճի ամենուրեք: Մեզի կ'ըսեն թէ՛ ուտելիքի ու հագնելիքի չափազանց արտադրութիւն կայ, բայց նոյն ատեն՝ միլիոնաւոր մարդիկ անօթութենէ եւ ուտելիքի պակասութենէն կը տառապին:

Ամէն տեղ քաղաքական կացութիւնը գէշ է: Չկայ կառավարութիւն մը կամ ազգ մը որ ապահով զգայ, ու անոնց եւ ոչ մին կարող է իր առջեւ գտնուած հրատապ հարցերուն դարման մը գտնել: Գրեթէ բոլոր միապետութիւններն ալ երկրէս անհետացած են, եւ ժողովրդապետութիւնը անլի նուազ սպահով է ներկայիս՝ քան համաշխարհային պատերազմէն առաջ:

Բարոյական վիճակներն ալ շատ վատթարացած են: Ոճրագործութիւնը անելու վրայ է, մասնաւորապէս «Քրիստոնեայ Աշխարհ» կոչուած երկիրներու մէջ, ու բազմաթիւ կիներ՝ եւ նոյն իսկ պատանիներ՝ ստորնացած այրերէ ալ անլի ցած աստիճանի մը հասած են: Վախն ու մտահոգութիւնը պատած են ժողովուրդը, եւ զրեթէ չկայ մէկը որ ապահով զգայ իր տանը մէջ, իր ստացածքին կամ մարմնին մասին:

Ներկայ դժբախտ կացութեանց համար ամենէն մեղազրեւիին հող չէ թէ ով ալ եղած ըլլայ՝ անվիճելի իրողութիւնը այն է թէ՛ հազար հինգ հարիւր տարիներէ իվեր «կազմակերպեալ քրիստոնէութիւն» կոչուածին գործունէութիւնը մարդկային ազգը իր ինկած վիճակէն վեր չէ բարձրացուցած կամ ժողովուրդին յոյս ներշնչած:

«Քրիստոնեայ Աշխարհ» կոչուածին կառավարիչներն ու ժողովուրդները այնպէս յայտարարած են թէ Եհովա Աստուծոյ կը հաւատան, ու ըսած են թէ իրենք Ս. Գրքին կը հաւատան որպէս Անոր Խօսքին, եւ Քրիստոս Յիսուսի՝ որպէս մարդոց Փրկիչին: Այժմ՝ կառավարողներուն ու ժողովուրդին ուղղակի կը հարցնենք. Միթէ ասոնց յայտարարութիւնը ուղիղ եւ անկեղծ է: Աստուծոյ Խօսքին մասին Յիսուս բացարձակ իշխանութեամբ ըսաւ. «Քու խօսքը ճշմարտութիւն է»: Եթէ կը հաւատանք թէ Եհովա ճշմարտութիւնն է՝ այն ատեն ինչո՞ւ վարանած մտանք Անոր Խօսքին ու թե-



բախտար մարդոց կարծիքներուն ու տեսութիւններուն միջեւ: Ես թախանձագին հրաւէր կուտամ իշխողներուն ու ժողովուրդին՝ որ ուշադրութեամբ նկատի առնեն Ս. Գիրքը ներկայ ժամանակուան գէշագերու լոյսովը, ինչու որ աշխարհի նեղութեանց պատճառին մասին հոն լիակատար տեղեկութիւն կը տրուի, եւ հոն որոշապէս յայտնուած է մարդուն հանգստութեան եւ ազատութեան յոյսը:

Ս. Գրոց Աստուածը, Եհովան, միակ ճշմարիտ Աստուածն է: Ան բոլոր կեանքերու աղբիւրն է: Դարեր առաջ Նա խոստացաւ իր յարմար ատենին հաստատել կառավարութիւն մը՝ որ աշխարհը արդարութեամբ պիտի կառավարէ, եւ այդ կառավարութեան օրով՝ հարուստն ու աղքատը, զօրաւորն ու տկարը, Հրիան ու ոչ-Հրիան, գերին ու աղատը, բոլորն ալ պատեհութիւնը պիտի ունենան ազատութեան, բարգաւաճութեան, երջանկութեան ու մըշտընջենական կենաց օրհնութիւններն ստանալու (Մինդ. ԻԲ. 18, Եսայ. Թ. 6, 7): Այդ խոստումը ճշմարիտ ըլլալով՝ պէտք է որ գայ ատեն մը՝ երբ երկրի վրայ ապրողները պիտի գիտնան թէ հասած է Աստուծոյ Թագաւորութեան կամ կառավարութեան հաստատման եւ ժողովուրդին օրհնուիլ ըսկըսելու ժամանակը:

Բանսարկու Սատանան երկար ժամանակ այս աշխարհի աներեւոյթ իշխանը եղած է: Ան ճշմարիտ Աստուծոյ հակառակօրդը եւ մարդուն ամենավատ թշնամին է, որ մարդիկը ապականութեանց մղած է՝ զանոնք բոլորն ալ Եհովա Աստուծմէ հեռացնելու նպատակաւ: Տարակոյս չկայ թէ Աստուած երկար ատեն առաջ կրնար սանձել կամ սպաննել Սատանան, սակայն Անոր կատարեալ իմաստութիւնը ուրիշ կարգադրութիւն ըրաւ: Աստուած նախ եւ առաջ Յիսուսը աշխարհ զրկեց մարդկային ազգին համար փրկութիւն հայթայթելու, եւ Յի-

սուս այդ բանն ըրաւ Գողգոթայի վրայ իր կենաց արիւնը հոսեցնելով:

Երբ Աստուած Յիսուսը մահուընէ յարոյց ու երկինք համբարձուց՝ Նա ըսաւ Անոր՝ ինչպէս որ Սաղմոս ճԺ-ին մէջ գրուած է. 'Սպասէ', մինչեւ որ Սատանան տապալելու եւ արդարադատ կառավարութիւնը հաստատելու ժամանակը հասնի': Ըստ պատմի այդ ժամանակաշրջանին՝ Աստուած մարդոց մէջէն իր անուանը համար ժողովուրդ մ'առնելու ետեւէ եղած է:

Նոյն ատեն՝ Աստուած երկրիս ժողովուրդներուն թոյլ տուած է որ ջանան բաղձալի կառավարութիւններ հաստատել ու առաջ տանիլ: «Քրիստոնեայ Աշխարհ» կոչուած ազգերը ճիշդ այդ բանին հաւանութիւն տուին ու ձեռք դարկին: Անոնք համաձայնեցան Ս. Գիրքն իրբեւ իրենց առաջնորդներունիլ, եւ անցեալ տասնըֆինգ դարերու տեւողութեան կառավարութիւններ հաստատած ու յայտարարած են թէ՛ այդ կառավարութիւնները երկրիս վրայ որպէս Աստուծոյ ներկայացուցիչները իշխած են: Սակայն, իրողութիւնները ցոյց կուտան թէ՛ մասնաւորապէս այդ ազգերն են որ զԱստուած մոռցած, Անկէ հեռացած եւ Աստուծոյ թշնամիին, Սատանային, ազդեցութեան տակ եկած են բացարձակապէս:

1914-ին վերջ դտաւ Եհովայի ակնարկած սպասումի ժամանակը: Սատանան, մարդոց անտեսանելի իշխանը, մինչեւ այդ ատեն առանց արգիլուելու առաջ տարեր էր իր իշխանութիւնը. սակայն երբ Աստուծոյ ժամանակը հասաւ՝ Ան Քրիստոս Յիսուսը դրկեց աշխարհի Թագաւորն ըլլալու (Սաղմոսաց Թ. 6): Ըստ Յայտնութեան գրքին եւ Ս. Գրոց ուրիշ մասերու վկայութեան՝ ատկէ անմիջապէս վերջ երկնից մէջ պատերազմ մ'սկսաւ, մէկ կողմին վրայ ըլլալով Քրիստոս եւ Անոր հրեշտակները իսկ հակառակ կողմին վրայ ալ՝ Սատանան ու անոր

հրեշտակները: Այդ կռիւը վերջացաւ՝ երբ Սատանան երկինքէն վար նետուեցաւ. ու ատկէ իվեր՝ Բանասրկու Սատանան իր գործունէութիւնները բացարձակապէս երկրիս վրայ առաջ կը տանի: Դուք կը դարմանաք թէ անտեսական, քաղաքական ու բարոյական վիճակները ինչո՞ւ համար այսքան սոսկալիորէն վատ են ներկայիս, եւ ինչո՞ւ համար անոնք հետզհետէ ա'լ աւելի կը վատթարանան: Պատասխանը տրուած է Յայտնութեան ԺԲ. 12-ին մէջ սա խօսքերով. «Վա՛յ երկրի ու ծովու բնակիչներուդ, վասն զի Բանասրկուն ձեզի իջաւ, որ շատ բարկութիւն ունի՝ զխնայով որ քիչ ժամանակ պիտի կենայ»:

1914-ին էր որ երկնից մէջ պատերազմը տեղի ունեցաւ, եւ նոյն այդ տարին էր որ Սատանան «Քրիստոնեայ Աշխարհ»-ի ազգերը համաշխարհային մեծ պատերազմին մէջ մխրճեց: Արդ չմոռնանք թէ այդ պատերազմին զաղարուժէն յետոյ՝ երկրիս վրայ կացութիւնը երթալով ա'լ աւելի վատթարացած է: Սատանային գործակալները անխառնար Եհովա Աստուածը կ'ամբաստանեն այն չարիքներուն, ոճրագործութիւններուն եւ ամբարշտութեանց համար՝ որոնք ներկայիս ազգերն ու ժողովուրդները կը պատուհասեն: Սատանան այդ անիրաւ ամբաստանութիւնը անոր համար կ'ընէ՝ որ մարդիկ Եհովա Աստուծոյ հայհոյեն ու Անկէ հեռանան: Սատանային ծրագիրն է ժողովուրդը մղել որ Ս. Գիրքն ու Անոր հեղինակութիւնը անտեսեն եւ իրենց օգնութեանն ու փրկութեանը համար մարդոց նային: Այդպէս՝ Սատանան մեծ խաբէութիւն մը է գործ կը գնէ մարդկութեան վրայ, եւ ատոր համար դուք կը տեսնէք որ կանխամտածուած ջանք կը թափուի Ս. Գիրքը վարկարեկելու եւ ժողովուրդը Անոր վրկայութեան մասին տգէտ պահելու համար:

Եհովայի Թագաւորութիւնը եկած է արդէն: Ան Քրիստոս Յիսուսը, երկրիս օրինաւոր իշխանը,

Իր իշխանութեան դահին վրայ դրած է: Ուրեմն Աստուած ինչո՞ւ չոչնչացնէր Սատանան ու անոր կազմակերպութիւնը եւ ժողովուրդը ազատեր: Ահա ճիշդ այդ բանն է որ Աստուած մօտ ատենէն պիտի ընէ. բայց այդ բանէն առաջ՝ Անիկա ընելիք ուրիշ գործ մ'եւս ունի, եւ ատոր համար մարդոց ներկայիս պէտք է վկայութիւն տալ:

Աստուած մարդը կամքի ազատութեամբ ստեղծեց, իր փափաքած ճամբան ընտրելու իրաւասութիւն շնորհած ըլլալով անոր: Սակայն ոչ մէկ անհատ կրնայ այդպիսի ընտրութիւն մ'ընել եթէ չափով մը գիտութիւն չունենայ զոնէ: Համաշխարհային պատերազմը 1918-ին դադրեցաւ ազգերուն վրկայութիւն տրուելու մասնաւոր նպատակաւ, որպէս զի մարդիկ կարենային իրենց հետեւելիք ճամբան ընտրել-- կա՛մ հպատակութիւն յայտնելով Աստուծոյ եւ Անոր արդարադատ թագաւորութեան, եւ կամ մարդոց տկար ջանքերուն տակաւին վստահելով: 1914-ի համաշխարհային պատերազմին տեւողութեան եւ անկէ վերջ՝ ազգերուն վրայ եկած զէպքերը,-- սովեր, համաճարակներ ու մեծ նեղութիւններ-- որոշապէս կ'ապացուցանեն Քրիստոսի եւ Անոր թագաւորութեան եկած ըլլալը:

Ամէն անոնց՝ որ այս ապացոյցները տեսած ու հաւատացած եւ ինքզինքնին Յճովայի նուիրած են՝ Մատթէոսի ԻԴ. 14-ին մէջ սա պատուէրը տրուած է. «Եւ արքայութեան այս աւետարանը բովանդակ աշխարհի մէջ պիտի քարոզուի՝ բոլոր ազգերուն վկայութիւն ըլլալու, եւ անկէ ետեւ վերջը պիտի գայ»: «Այս աւետարանը» կամ բարի լուրը ներկայիս պէտք է քարոզուի «Քրիստոսնայ Աշխարհ»-ի, որպէս զի ժողովուրդները կարենան իրենց հպատակութիւնը յայտնել Աստուծոյ՝ եւ Քրիստոսի իշխանութեան տակ դրուած Անոր թագաւորութեան: Այրեր ու կիներ՝ այդ պատուէրին հնազանդելով՝ ճշմարտութեան պատգամը պարունակող գրքերու

ու ընտիրոյի օգնութեամբը ժողովուրդին դացած են ու դեռ կ'երթան՝ իրենց հետ ունենալով անժխտելի իրողութիւնները: Քիչեր միայն ուշադրութիւն ընծայած եւ ուրախացած են, մինչդեռ շատեր հակառակած են ու մեծամասնութիւնը անտարբեր կը մնայ:

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բացայայտ է թէ երկրիս վրայ տիեզերական արդարադատ կառավարութիւն մը չկրնար լիովին հաստատուիլ՝ մինչեւ որ նախ չընաճնջուին Սատանային ամբարիշտ իշխանութիւնն ու կազմակերպութիւնը: Մինչեւ որ ոճրագործները բոլորովին չըսանձուին կամ չոչնչացուին՝ ոճիրներէ զերծում եւ արդարասէրներու համար ալ ապահովութիւն չկըրնար ըլլալ: Մինչեւ որ քաղաքական անուղղամտութիւնը չոչնչացուի՝ ժողովուրդը չկրնար արդարադատ կառավարութիւն մ'ունենալ: Մինչեւ որ տընտեսական անարդարութիւնն ու ճնշումը չզաղթին՝ ժողովուրդը չկրնար բացարձակ հանգստութիւն ունենալ: Մինչեւ որ կրօնական կեղծաւորութիւնը չոչնչացուի՝ ճշմարտութեան լոյսը չկրնար լիովին ցոլալ մարդոց մտքերուն վրայ:

Հետեւաբար՝ Քրիստոս թագաւորին իշխանութեան տակ դրուած Աստուծոյ արդարադատ թագաւորութեան առաջին գործն է՝ ոչնչացնել Սատանային ամբարիշտ կազմակերպութիւնը, որպէս զի կարելի ըլլայ երկրիս վրայ լիովին ու կատարելապէս հաստատել ժողովուրդին արդարադատ ու խաղաղարար կառավարութիւնը: Այդ պատճառաւ՝ գըրւած է Յայտնութեան ԺԶ. 13--16-ին մէջ թէ՛ Սատանային իշխանութեան տակ համախմբուած ամբարշտութեան ուժերը եւ Քրիստոսի իշխանութեան տակ համախմբուած արդարութեան ուժերը դէպի Արմագեդոն կը դիմեն, որ ամենամեծ պատերազմը

և և աշխարհի տեսած ամենամեծ նեղութեան ժամանակը պիտի ըլլայ:

Աստուած Իր Եսայի, Երեմիա ու Եղեկիէլ մարգարէներուն ձեռքով Իր վճիռը դրած է «Քրիստոնեայ Աշխարհ»-ի դէմ, ու ան դատապարտուած է իշնայրու: Հոս ըստուածները պէտք չէ որպէս սպառնալիք նկատուին ուրիշ անհատի դէմ. ատոնք պարզապէս աղղարարութիւններ են «Քրիստոնեայ Աշխարհ»-ի կառավարիչներուն ու կառավարողներուն ուղղուած: Աստուծոյ նուիրողներուն վրայ պարտականութիւն դրուած է, այդ աղղարարութիւնը տալ, և և եթէ անոնք թերանան այդ բանը ընել՝ այն ատեն Եհովան քարերուն աղաղակել ու ժողովուրդին քարոզել պիտի տայ:

«Քրիստոնեայ Աշխարհ»-ը կը բաղկանայ այն ազգերէն՝ որոնք ինքզինքնին «քրիստոնեայ» կը կոչեն, և այդ ազգերուն գլխաւորներն են Ամերիկան ու Բրիտանական Կայսրութիւնը: «Քրիստոնեայ Աշխարհ»-ի ազգերը Քրիստոս Յիսուսի հետեւորդութիւն յայտարարած ըլլալով՝ գոնէ ակնարկեալ (իմփայտ) ուխտ մ'ըրած են Աստուծոյ կամքին ուշադրութիւն ընծայելու և զայն կատարելու. այս պատճառաւ՝ աւելի մեծ պատասխանատուութիւն կը ծանրանայ այս ազգերուն՝ քան թէ «հեթանոս» կոչուած ազգերուն վրայ:

Ներկայիս՝ «Քրիստոնեայ Աշխարհ»-ը կը զբաւէ այնպիսի դերք մը՝ որպիսին Երուսաղէմ կը զբաւէր իր կործանման ժամանակ: Երուսաղէմ «Քրիստոնեայ Աշխարհ»-ի նախապատկերն էր. հետեւաբար Եհովայի մարգարէին կողմէ Երուսաղէմի ուղղուած աղղարարութիւնները աւելի դժուար կերպով կ'որոգուին մեր օրուան «Քրիստոնեայ Աշխարհ»-ին: Իմ փափաքս է որ թէ՛ իշխողները և թէ՛ ժողովուրդը հասկանան թէ՛ այս առթիւ իմ նպատակս չէ՛ հակաճառութիւն առաջ բերելու համար ուրիշ բան ըսել. հասցա՛ այս տեղեկութիւնը կը տրուի

որպէս աղղարարութիւն, քանզի ատիկա Աստուծոյ կամքն է և ժողովուրդը պէտք ունի այդ տեղեկութեան՝ երբ տակաւին իրենց վրայ չէ հասած այն ամենամեծ նեղութիւնը որ երբէք պատահած ըլլայ մարդկութեան:

«Քրիստոնեայ Աշխարհ»-ի ճիշդ առջեւը կը գտնուի այն ամենամեծ նեղութիւնը որուն մէջէն երբէք անցած է ուրիշ ազգ: Ատոր պատճառը Եսայի մարգարէ իր գրքին ԻԳ. 3-5 համարներուն մէջ տրուած է սա բառերով. «Այս խօսքը Եհովա խօսեցաւ: ... Աշխարհ կը նուաղի ու կը մարի, երկրիս ժողովուրդին մեծերը կը նուաղին: Ու երկիր (երկրիս կազմակերպուած ժողովուրդները) իր բնակիչներուն տակ պղծուեցաւ, քանզի անոնք օրէնքները զանց ըրին, պատուիրանքները փոխեցին, յաւիտենական ուխտը խափանեցին»:

Ս. Գրքը կը պարունակէ Աստուծոյ օրէնքները և ամէն տեսակ ոճիրներու մասին բացատրութիւն կուտայ: «Քրիստոնեայ Աշխարհ»-ի ազգերը այդ ամէն մէկ օրէնքներուն դէմ մեղանշած ու ամէն կերպ ոճրագործութիւններով յանցաւոր են: Յիսուս և Անոր առաքեալները որոշապէս յայտարարեցին այն օրէնքները՝ որոնցմով Աստուծոյ եկեղեցին պիտի կառավարուէր երկրիս վրայ, և այդ օրէնքները կը գտնուին Ս. Գրքին մէջ: «Կազմակերպեալ Քրիստոնէութիւն»-ը կամ «Քրիստոնեայ Աշխարհ»-ը Աստուծոյ տուած այդ օրէնքները փոխեց և անոնց տեղը հաստատեց մարդոց կապալաւորան սովորութիւնները, այդպէս մեծ նախատինք բերելով Եհովա Աստուծոյ անուանը: Աստուած Նոյի յայտնեց իր «յաւիտենական ուխտ»-ը և յայտարարեց մարդկային կեանքի նուիրակնութիւնը: «Քրիստոնեայ Աշխարհ»-ի բոլոր ազգերն ալ՝ անարդարօրէն մարդկային անմեղ արիւն հոսեցնելով՝ ոտնակոխ ըրած են յաւիտենական ուխտը: «Այս պատճառաւ (կ'ըսէ Տէրը) նորովք կերաւ երկիրը, ու անոր

մէջ ընակողները իրենց յանցանքին պատիժը կրեցին... երկրի ընակիչները այրեցան, ու թիչ մարդէկ մնացին»-- Եսայ. ԻԴ. 6:

Բոլոր ազգաց օրէնքն ալ՝ շնութիւնը կամ պոռնիկութիւնը կը դատապարտէ իրեն մեծ ոճիր մը: Տիրոջը անունը կրող կաղմակերպութիւններու կողմէ ուրիշ մեծ ոճիր մը գործուած է, եւ այդ ոճիրին Աստուած շնութիւն կամ պոռնիկութիւն անունը կուտայ ու կը դատապարտէ զայն: Այդ ոճիրը՝ Աստուծոյ ճշմարտութիւնները Սատանային ամբարիշտ բաներուն հետ խառնելուն եւ անոր գործերը օրինակելուն մէջ կը կայանայ: Այդ բանը ընողներուն խօսելով եւ ոճիրը պարզաբանելով՝ զրուած է Յակոբու Դ. 4-ին մէջ. «Շնացողներ, չէ՞ք գիտեր որ այս աշխարհի սէրը Աստուծոյ դէմ թշնամութիւն է. ուստի ու՛ որ կ'ուզէ աշխարհի բարեկամ ըլլալ, ինքզինք Աստուծոյ թշնամի կ'ընէ»: Ժողովուրդը վիկայ է այն իրողութեան թէ՛ «կաղմակերպելալ Գրիստոնէութիւն»-ը այս աշխարհի բռնակալներուն հետ ձեռք ձեռքի կ'ընթանայ եւ իրապէս աշխարհի մէկ մասը կը կաղմէ:

Յիսուս եւ Անոր հաւատարիմ առաքեալներն էին որ հաստատեցին ճշմարիտ քրիստոնէութիւնը: Աստուած անոր մասին կը յայտարարէ թէ՛ Ինք զայն որպէս ընտիր որթ մը տնկեց (Երեմ. Բ. 21): Ըճմարիտ քրիստոնէութեան վրայ զրուած պարտականութիւնն էր եւ է՝ մի միայն մէկ Աստուած ունենալ եւ Անոր ծառայել, հաւատարմօրէն Գրիստոս Յիսուսի քայլերուն հետեւիլ եւ Աստուծոյ թաղաւորութեան նկատմամբ լիակատար ու անվերապահ հպատակութիւն ցոյց տալ:

Ըճմարիտ քրիստոնէութեան «որթ»-էն երկու խոշոր ճիւղեր բուսան, որոնք են՝ Կաթոլիկ եւ Բողոքական յարանուանութիւնները (Լուսաւորչականութիւնը Կաթոլիկութեան ճիւղին մէջ կը պարփակուի): Ոչ ոք պիտի ջանայ ուրանալ թէ՛ այդ երկու

յարանուանական հսկայ ճիւղերն ալ բացէ ի բաց դաշնակցած են աշխարհի քաղաքական, առեւտրական եւ զինուորական ուժերուն հետ: Այսօր՝ այդ կրօնական երկու հսկայ կաղմակերպութիւնները, երկրիս գլխաւոր ազգերուն վրայ իշխող իրենց դաշնակիցներուն հետ միասին, կը կազմեն «Գրիստոնէայ Աշխարհ» կամ «Կաղմակերպելալ Գրիստոնէութիւն» կոչուածը: Անուանական քրիստոնէութեան այդ երկու հսկայ ճիւղերն ալ, առանց նկատի առնելու մարդոց հաւատքի կամ կենցաղի անմաքրութիւնը, իրենց դոներն ու թեւերը լայն բացած՝ եւ դանոնք հրապուրած ու հրաւիրած են իրենց հօտերուն մէջ մտնելու եւ իրենց հեշտանքին մասնակից ըլլալու: Այդ երկուքն ալ, ինքզինքնին աւելի հրապուրիչ դարձնելու համար, եկեղեցիին մէջ Աստուծոյ հաստատած օրէնքներն ու պաշտամունքը փոխած եւ անոնց տեղը հաստատած են պիղծ սովորութիւններ, որոնցմով մեծապէս անարդուած է Աստուծոյ անունը: Ատոնց երկուքն ալ, ժողովուրդը ճնշող հարուստը եւ անգութ ու դաժան քաղաքական իշխանները իրենց հօտերուն գլխաւորները կամ ընտիրներն ընելով, մէկզի քշած եւ կեղեքած են թշուառներն ու չքաւորները:

Իսրայէլի այն տասը ցեղերը՝ որոնք իրենց մայրաքաղաքը Սամարիայի մէջ չիներ էին՝ նախապատկերեցին կաթոլիկ կաղմակերպութիւնը. եւ այն Իսրայելացիներն ալ՝ որոնք իրենց մայրաքաղաքը Երուսաղէմը ըրած էին՝ նախապատկերեցին բողոքական յարանուանութիւնները: Այն բաները զորս Աստուած Իր մարդարէններուն միջոցաւ այդ վաղեմի ազգերուն ըսաւ՝ ներկայիս աւելի զօրաւոր ու ազգուկերպով կը պատշաճին արդի «քրիստոնէութեան»:

Կաթոլիկ ազգերը բողոքական ազգերէն աւելի թիչ լոյս ունեցած են. ուստի՝ աշխարհի ներկայ կացութեան մեծագոյն պատասխանատուութիւնը բողոքական ազգերուն վրայ կը ծանրանայ: Ինչպէս

որ Աստուած Իսրայելացիները պատժեց՝ Նա սոսկալի կերպով պիտի պատժէ նաեւ «Կաղմակերպեալ Քրիստոնէութիւն»-ը, եւ ամենասատիկ կերպով պատժուողները պիտի ըլլան «Քրիստոնեայ Աշխարհ»-ի բողոքական կոչուած ազգերը: Ուրեմն՝ թո՛ղ իշխողներն ու ժողովուրդները լրջօրէն նկատողութեան առնեն թէ՛ քիչ ատենէն ու այս սերունդին կենաց շրջանին՝ «Քրիստոնեայ Աշխարհ»-ի ազգերուն վրայ պիտի հասնի այն ամենամեծ նեղութիւնը որ երբէք եկած ըլլայ մարդկութեան վրայ, եւ ատկեա պիտի դայ այն նպատակաւ՝ որ բոլորն ալ գիտան թէ Յնովան է միակ ճշմարիտ Աստուածը եւ թէ Անոր խօսքն ու անունը պիտի ջատագովուին:

Աւելի վերջին տարիներս՝ իրարու քով հաւաքուած են քրիստոնեաներու խումբ մը՝ որոնց «Սուրբ Գիրք Ուսանողներ» անունը տրուած է: Ասոնցմէ եղած են այնպիսիներ՝ որոնք անտեսած են Աստուծոյ Խօսքը, ապստամբած են Անոր պատուէրներուն դէմ, հակառակած են Անոր Թագաւորութեան պատգամին հրատարակաւ քարոզուելուն, իրենց եսասիրական ընթացքին հետեւած եւ մեծ նախատինք բերած են Աստուծոյ անուանը: Տէրը ասոնք կը դատապարտէ իրբեւ անօրինութիւն դործողներ, որոնք Աստուծոյ միւս թշնամիներուն հետ ընաջինջ պիտի ըլլան (Բ. Թեաղ. Բ. 1--9): Ասոնց այժմ ազդարարութիւն տրուելու է, եւ այդ ազդարարութիւնը կը տրուի ներկայիս:

«Քրիստոնէութիւն» դաւանողներէն դուրս կան ուրիշներ ալ՝ որոնք իրենք իրենց անաստուած անունը կուտան եւ հակառակ են բոլոր անոնց որ Տիրոջ անունը իրենց վրայ առած են, ըլլան անոնք կեղծ թէ ճշմարիտ Քրիստոնեաներ: Այդ դասակարգին մէջ առաջնորդի դեր կատարողը պուլչէվիկ Ռուսիան է, եւ այդ դասակարգը նախապատկերացուած էր հին Ամմոնացի ժողովուրդով: Աստուծոյ ու Անոր ժողովուրդին այդ անաստուած թըլ-

նամիները մեծ նախատինք բերած են Անոր անուանն ու Թագաւորութեանը եւ իրենց ուժերը գործածած են ժողովուրդը ճշմարտութեան նկատմամբ կոյր պահելու համար: Այժմ թող անոնց իշխաններն ու ժողովուրդը ուշադրութիւն ընծային թէ Աստուած ի՛նչ կ'ըսէ բոլոր Իր անունը նախատողներուն նրկատմամբ: Իր երեմիա մարգարէին միջոցաւ Նա այժմ ազգերուն ու ժողովուրդներուն սա ազդարարութիւնը կուտայ. «Քանզի ահա ես իմ անունովս կոչուած քաղաքին վրայ (այսինքն՝ «Կաղմակերպեալ Քրիստոնէութեան») կամ «Քրիստոնեայ Աշխարհ»-ին վրայ որ Աստուծոյ ու Քրիստոսի անունը վրան առած է) չարիք բերելու սկսայ. միթէ դուք (հեթանոս ազգերը) անպատիժ պիտի մնաք. անպատիժ պիտի չմնաք, քանզի երկրի բոլոր բնակիչներուն վրայ սուր պիտի կանչեմ, կ'ըսէ զօրաց Տէրը: Ուստի դուն այս բոլոր խօսքերը անոնց մարգարէսնալով՝ անոնց ըսես, Տէրը բարձրէն պիտի դուայ, ու իր սուրբ բնակութենէն իր ձայնը պիտի տայ. իր բնակարանին վրայ ահարկու ձայնով պիտի դուայ, խաղող կախողներու աղաղակին պէս երկրի բոլոր բնակիչներուն պատասխան (կամ ձայն) պիտի տայ: ... Եւ այն օրը Տիրոջմէ սպաննրեւածները երկրի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը պիտի ըլլան. անոնց համար սուգ պիտի չբռնուի, երկրի երեսին վրայ աղբի պէս պիտի չթաղուին, երկրի երեսին վրայ աղբի պէս պիտի չլայնուին: Ողբացէ՛ք, ո՛վ հովիւներ, ու աղաղակեցէք, եւ մոխիրի մէջ թաւալեցէք, ով հօտին ընտիրները. վասն զի ձեր մորթուելու ու ցիրուցան ըլլալու օրերը լրացած են, ու պատուական ամանի պէս պիտի իյնաք: Եւ հովիւներուն փախչելու ճամբան ու հօտին ընտիրներուն ազատուելու միջոցը պիտի կորսուի»-- Երեմ. ԻԵ. 29, 30, 33--35:

Եհովա Աստուած Իր հօր «աջ ձեռք»-ով, Քրիստոս Յիսուսով, կը յայտնէ թէ Ինք պիտի հարուածէ

կեղեքող կեղծաւոր ազգերը ու բոլորովին պիտի ուզեն չափեն Սատանային կաղճակեցողութիւնը, որ պէս զի ժողովուրդը ազատօրէն ճանչնայ արգարադատ Աստուածը, Անոր ծառայէ ու ապրի: Այդ խիստ մօտեցած ահաւոր նեղութեան մասին Յիսուս ըսաւ Մատթէոս ԻԴ. 21-ով. «Այն ատեն այնպիսի մեծ նեղութիւն պիտի ըլլայ, որուն նմանը աշխարհի ըսկիցրէն մինչև հիմա եղած չէ, եւ ոչ ալ պիտի ըլլայ»: սակայն ազատուողներ պիտի ըլլան:

Ո՞վ ՊԻՏԻ ԱԶԱՏԻ

Որո՞նք պիտի ըլլան այդ մեծ նեղութենէն ազատուողները եւ թագաւորութեան օրհնութիւններն ստանալու առաջին պատեհութիւնը ունեցողները: Եհովայի պատասխանը կը գտնուի Սովոնեայ Բ. 1--3-ին մէջ: Ատոնք այնպիսիներն են որոնք կը ջանան ուղիղն ընել եւ կը փափաքին ճշմարտութեան տեղեկանալ. այդպիսիները անբաղձալի են Սատանային կաղճակեցողութեան մէջ, բայց Եհովա տոննց կ'ըսէ. «Ժողովուեցէք, ժողովուեցէք, ով ատուած (կամ անբաղձալի) աղք. դեռ նախասահմանութիւնը կամ վճիռը չճնամ, օրը մղեղի պէս չանցած, դեռ Տիրոջը սաստիկ բարկութիւնը ձեր վրայ չեկած, դեռ Տիրոջը բարկութեան օրը ձեր վրայ չեկած: Տէրը փնտռեցէք, ով երկրի բոլոր խոնարհները, դուք որ անոր իրաւունքը ի դործ կը դնէք, արդարութիւն փնտռեցէք, խոնարհութիւն փնտռեցէք, թերեւ Տիրոջը բարկութեան օրը պահուիք» (Տես անդլ. Ս. Գիրքը): Եւրկայիս՝ աղքատներուն նկատմամբ քաղցրութիւն ու հողատարութիւն ցոյց տուողներուն մասին Տէր Եհովան կ'ըսէ. «Երանի անոր որ աղքատին հող կը տանի. նեղութեան օրը Տէրը պիտի փրկէ զանիկա: Տէրը պիտի պահէ ու ապրեցնէ զանիկա: Երանելի պիտի ըլլայ երկրի վրայ, եւ թշնամիներուն պիտի չճատնէ զանիկա»-- Սաղմոսաց ԽԱ. 1, 2:

79-15069

«Քրիստոնեայ Աշխարհ»-ի մէջ ներկայիս ազնիւ մտքով ու անկեղծ սրտով միլիոնաւոր մարդիկ կան: Մարդոց ահա այս դասակարգն է որ, Տիրոջ վերոյիշեալ պատուէրին հնադանդելով, պիտի ազատի այն սոսկալի ծեծէն զոր Աստուած «Քրիստոնեայ Աշխարհ»-ին պիտի տայ, եւ այդպէս ազատուած ըլլալով՝ անիկա առաջինը պիտի ըլլայ Անոր արդարադատ կառավարութեան օրհնութիւններն ըստացողներուն մէջ:

ՅՈՅՍ

Աշխարհի ներկայ անարդար կառավարութիւնները ժողովուրդներուն ռեւէ յոյս չեն կրնար ընծայել: Անոնց դէմ արտասանուած աստուածային դատաստանը կը յայտարարէ թէ անոնք պարտին կործանել: Ուստի աշխարհի միակ յոյսն է Աստուծոյ արդարադատ թագաւորութիւնը կամ կառավարութիւնը, անոր անտեսանելի իշխանը ըլլալով Քրիստոս Յիսուս: Մտաւրում մեծ նեղութենէն անմիջապէս վերջ՝ Քրիստոս Յիսուս թագաւորը աշխարհի վերաշինութեան գործին պիտի ձեռնարկէ: Ան արդարութեամբ պիտի իշխէ, եւ երբ իր դաստանտները երկրի վրայ ըլլան՝ մարդիկ արդարութիւն պիտի սորվին (Եսայ. ԻԶ. 9): Անիկա ժողովուրդը արդարութեամբ պիտի դատէ. որ կը նշանակէ թէ այն ժամանակ ամէն անարդարութիւն պիտի սանձուի եւ ժողովուրդը ուղիղ ճամբով պիտի առաջնորդուի (Գործք ԺԷ. 31): Ինչպէս որ Բ. Տիմ. Դ. 1-ին մէջ ըսուած է՝ Անիկա նախ ողջերը պիտի դատէ եւ ապա մեռածները: Ահաւոր նեղութենէն ողջ մնացող ու ազատուողները պիտի դաստիարակուին, օթանդակութիւն ու մխիթարութիւն պիտի ստանան, ու հիւանդները պիտի առողջացնին եւ տկարները կազդուրուին:

Քրիստոսի արդարադատ իշխանութեան ատեն՝ պիտի չգտնուին հացի կարծրութիւնները: Աստուած



Իր Եսայի մարգարէին միջոցաւ (ԻՆ. 6) կը յայտարարէ թէ՛ այդ թագաւորութեան ժամանակ Ինք իբրեւ զօրաց Տէրը պարարտ բաներու կոչունք մը պիտի տայ ժողովուրդին, ու անոնք պիտի ուտեն: Հոն այլեւս պիտի չտեսնուին հաց խնդրողներու շարքեր, երբ անդին հարուստ փոքրամասնութիւնը շուայօրէն ու գեղխութեամբ կ'ապրի, ինչու որ գըրւած է Աստուծոյ Խօսքին մէջ թէ՛ Քրիստոս արդարութեամբ պիտի տիրէ ու արդարութեամբ պիտի դատէ աղքատը (Եսայ. ԺԱ. 4, ԼԲ. 1): Այն ատեն՝ «խեղճերը Տիրոջմով իրենց ուրախութիւնը պիտի աւելցնեն, ու չքաւոր մարդիկ Իսրայէլի Սուրբովը պիտի ցնծան»-- Եսայ. ԻԹ. 19:

Այն ժամանակ պատերազմական տուրքերու համար ծանրաբեռն տուրքեր պիտի չհաստատուին, ինչու որ Աստուած խոստացած է թէ՛ ա՛լ պատերազմ պիտի չըլլայ (Եսայ. Բ. 2-4): Կառավարական բեռերը Խաղաղութեան Իշխանին ուսերուն վրայ պիտի ըլլայ, եւ Անոր կառավարութիւնն ու խաղաղութիւնը վերջ պիտի չունենան (Եսայ. Թ. 6, 7): Այն ատեն ա՛լ պիտի չըլլան անխիղճ կալւածատէրներ, որոնք ապօրինի միջոցներով իրենց ձեռքին մէջ կը պահեն տուներն ու հողերը եւ հասարակ ժողովուրդը գերիներու կը վերածեն, որովհետեւ գրուած է Աստուծոյ Խօսքին մէջ թէ՛ Աստուծոյ այդ թագաւորութեան ատեն՝ ամէն մարդ իր սեպհական որթին ու թղենիին տակ պիտի նստի ու զիրենք վախցնող մը պիտի չըլլայ: Մարդիկ իրենց տուները պիտի շինեն ու մէջը բնակին. իրենց բերքերը պիտի ցանեն եւ անոնց պտուղը ուտելով պիտի հրճուին ու ցնծան-- Եսայեայ ԿԵ. 21, Միքիայ Դ. 1-4:

Մտահոգութիւնն ու անձկութիւնը միլիոնաւորներ վաղաժամ կերպով գերեզման կ'իջեցնեն: Տիրոջ թագաւորութեան ժամանակ՝ ա՛լ ոեւէ պատճառ պիտի չըլլայ մտահոգութեան ու անձկու-

թեան: Աստուծոյ փառքին զիտութիւնը երկիրը պիտի լեցնէ եւ մարդիկ պիտի գիտնան թէ՛ ուղիղը ընելով պիտի առողջանան, ուժեղանան ու ապրին, որովհետեւ գրուած է՝ «Ահա անոր առողջութիւնն ու բժշկութիւնն պիտի բերեմ ու զանոնք պիտի բժշկեմ, եւ խաղաղութեան ու ճշմարտութեան առատութիւնը անոնց պիտի յայանեմ» (Երեմ. ԼԳ. 6): «Ու հոն բնակողը պիտի չըսէ թէ՛ հիւանդ եմ»-- Եսայեայ ԼԳ. 24:

Սատանային ամբարիշտ իշխանութեան օրով՝ երկիրի տնաւորներ մեռած ու գերեզման իջած են: Քրիստոսի արդարադատ իշխանութեան ատեն՝ ասոնք գերեզմանէն դուրս պիտի բերուին ու իրենց պիտի շնորհուի կենաց տիրանալու յոյսը (Յովհ. Ե. 28, 29): Մահը մարդկային ազգին բերած է անպատեւի ցաւեր ու արտասուք, սակայն Քրիստոսի իշխանութեան օրով՝ մահն ու գերեզմանը պիտի բնաջնջուին եւ բոլոր Տիրոջ հնազանդողները պիտի ապրին (Ա. Կորնթ. ԺԵ. 25, 26): Մարդկային ազգին վրայ Սատանային բերած բոլոր վիշտերը, տառապանքն ու ցաւերը պիտի վերցուին Քրիստոսի իշխանութեան տակ գրուած Աստուծոյ թագաւորութեամբը, ինչպէս որ գրուած է Յայտնութեան ԻԱ. 4-ին մէջ. «Եւ Աստուած անոնց աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ, եւ ա՛լ մահ պիտի չըլլայ, ոչ սուգ եւ ոչ աղաղակ եւ ոչ ցաւ պիտի ըլլայ ասիկէ ետեւ. վասն զի առաջուան բաները անցան»:

Եհովան ըսաւ Աբրահամի. «Երկրի բոլոր ազգերը քու սերունդովք պիտի օրհնուին»: Ոոստացած սերունդը Քրիստոսն է, այն միջոցը՝ զոր Աստուած պիտի գործածէ բովանդակ մարդկութեան բնծայելու համար յաւիտենական կենաց օրհնութիւնները (Մննդ. ԻԲ. 18, Գաղ. Դ. 8, 16, 27-29): Եհովա Աստուծոյ Խօսքը ճշմարիտ է ու նա իր ամէն խոստումները պիտի կատարէ: Սատանան եւ անոր

գործակալները Աստուծոյ Խօսքը ուրացած, Անոր անունը անարգած եւ ժողովուրդը հեռացուցած են այն ճամբէն որ կենաց կ'առաջնորդէ: Պիտի գոյ ժամանակը երբ Եհովայի Խօսքն ու անունը պիտի ջատագովուին. եւ այդ պիտի ըլլայ այն նպատակաւ որ՝ մարդիկ գիտնան թէ Եհովան է Ամենակալը, եւ ամէն միտիթարութեանց Աստուածը», եւ այն Մէկը՝ որմէ միայն կրնան գալ յաւիտենական երջանիկ կենաց օրհնութիւնները:

Աշխարհիս ազգերը անյոյս են, եւ ներկայ կառավարութիւնները ունէ յոյս չեն կրնար ընծայել տառապող մարդկութեան: Ուրեմն ինչո՞ւ համար մարդիկ տակաւին դաշնակցութիւններու, խաղաղութեան դաշնագրութիւններու նման անյոյս ծրագիրներու եւ կեղծաւոր կղերականներու նային օգնութեան համար: Ինչո՞ւ համար նային այն բանին որ դատապարտուած է շուտափոյթ ու կատարեալ ոչնչացման:

Աշխարհի միակ յոյսը Աստուծոյ Թագաւորութիւնն է, Քրիստոսի՝ Ողորդութեան Իշխանին վարչութեան տակ դրուած: Ինձի տրուած այս կարճ ժամանակին մէջ՝ ձեր ուշադրութիւնը կրնամ հրաւիրել այդ Թագաւորութեան վերաբերեալ ճշմարտութեանց մի քանի գլխաւոր կէտերուն վրայ միայն: Ես կ'ուզեմ հասկցնել մարդոց թէ՛ կարելոր է Աստուծոյ Թագաւորութեան մասին տեղեկութիւն ստանալ: Ձեռք ձգեցէք այնպիսի հրատարակութիւններ կամ գիրքեր՝ որոնք ձեզի պիտի օգնեն Ս. Գրոց մէջ եղած այս ճշմարտութիւնները գտնելու, եւ ապա սերտեցէք եւ ուշադրութիւն ընծայեցէք անոնց:

Թագաւորութիւնը արդէն իսկ եկած է: Աստուած կը յայտնէ թէ՛ ժամանակը հասած ըլլալով պէտք է որ անոր մասին ծանօթութիւն տրուի մարդոց: Երկրիս վրայ պէտք է որ յայտարարուի Աս-

տուծոյ վրէժխնդրութեան օրը, ինչու որ ահա այդպէս պատուիրած է Եհովան (Եսայեայ 40. 1, 2): «Քրիստոնեայ Աշխարհ»-ը եւ հոն իշխող ազգերը՝ կարճ ժամանակուան մէջ ու ներկայ սերունդին կենաց տեսողութեան՝ ամբողջովին պիտի ջրնջուին: Այդ բանը տեղի պիտի ունենայ ո՛չ թէ հասարակ ժողովուրդին հարուստներուն դէմ կոուելովը՝ հապա Քրիստոս Յիսուսի միջոցաւ, Անիկա Եհովա Աստուծոյ ձեռքին մէջ ոչնչացման իբրեւ հզօր գործիք մ'ըլլալով: Երբ այդ մեծ գործը կատարուի, եւ «Քրիստոնեայ Աշխարհ»-ն ու բոլոր անօրինութիւն գործողները մոխրակոյտի վերածուին, ահա այն ատեն՝ ստեղծուածները պիտի գիտնան թէ Ամենակալ Աստուծոյ ձեռքն էր որ ըրաւ ատիկա: Նա այդ բանը պիտի կատարէ Իր անուան ջատագովութեանը եւ բոլոր արգարասէրներուն օգտին համար:

Ո՞վ ՊԻՏԻ ՏԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ

Ասիկա ժողովրդականացած պատգամ մը չէ: «Քրիստոնեայ Աշխարհ»-ի ղեկավարներն ու իշխանները պիտի ուրանան անոր ճշմարտութիւնը: Անոնք զայն վէճի առարկայ պիտի ընեն ու արհամարհեն: Անոնք պիտի ծաղրեն զայն, պիտի հակառակին անոր եւ պիտի դատապարտեն պատգամը տուողները: Ահա ճիշդ այդպէս եղաւ նաեւ երբ Աստուծոյ մարգարէն Երուսաղէմը նախազգուշացուց: Արեւուն տակ՝ ներկայիս այրերու եւ կրիներու միայն մէկ դասակարգ մը կայ՝ որ հաւատքն ու քաջութիւնը ունի «Քրիստոնեայ Աշխարհ»-ի եւ Աստանային բովանդակ կազմակերպութեան կործանումին ու Աստուծոյ Թագաւորութեան ժողովուրդին միակ յոյսը ըլլալուն պատգամը տալու, եւ մարդոց այդ դասակարգը կամ խումբը կազմուած է անոնցմէ՝ որոնք բացարձակապէս Եհովայի ու Անոր Թագաւորութեան դատին նուիրուած են:

Ասոնք մարդոց հաճութիւնը չէ որ կը վնասուեն, և ոչ ալ իրենց երկրային կեանքը սիրելի կը համարեն իրենց: Անոնց միակ ջանքն է Աստուծոյ պատւերներուն հնազանդը ըլլալ:

Թէև ասոնք Չարլըզ Թ. Րաբըր կը սիրեն իր կատարած գործին և Քրիստոսի հետեւող մ'եղած ըլլալուն համար՝ սակայն իրենք չեն կրնար պատշաճօրէն «ընտրական» կոչուիլ: Թէև ասոնք Սուրբ Գիրք ուսումնասիրողներ են՝ սակայն իրենք չեն կրնար արդարացիօրէն «Ս. Գիրք Ուսանողներ» կամ «Միացեալ Ս. Գիրք Ուսանողներ» կոչուիլ: Ասոնք ունէ մարդ արարածի հետեւողներ չեն, և ունէ մարդու անուն իրենց վրայ չեն առներ: Քրիստոս Յիսուսի արեամբ գնուած, Անոր Թագաւորութեան կանչուած և բոլորովին ու անկերպակհօրէն ատոր նուիրուած ըլլալով՝ ասոնք հրճուանօք իրենց վրայ կ'առնեն այն անունը զոր Եհովան տրուաւ իրենց, որ է՝ Եհովայի վկաները:

Ուստի հետեւեալ որոշմնագիրը կը ներկայացրնեմ, և Աստուծոյ ու մարդոց առջև ճշմարտօրէն ու անկեղծօրէն Եհովայի ու Անոր Թագաւորութեան նկատմամբ կատարեալ նուիրում խոստովանող ամէն մարդոց կոչ կ'ընեմ որ անոր որդեգրման համար քուէ տան, և ապա Եհովայի նկատմամբ իրենց նուիրումը և Անոր Թագաւորութեան հանդէպ ալ իրենց հպատակութիւնը ցոյց տան՝ Աստուծոյ Թագաւորութեան այս պատգամը մեծ ժրջանութեամբ երկրիս ազգերուն ու ժողովուրդներուն ընծայելով, և այդպէս՝ Եհովայի անուան ջատագովութեանը մէջ բաժին մ'ունենալով:

### ԵՀՈՎԱՅԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

ԻՇՆՈՂՆԵՐՈՒՆ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒՆ,

ԹՈՂ ԳԻՏՅՈՒԻ, Թէ միայն մէկ ճշմարիտ ու Ամենակալ Աստուած կայ, որուն անունն է Եհովա. Թէ մարդոց համար միայն մէկ Փրկիչ կայ, որուն անունը Քրիստոս է, զոր Աստուած իբրև աշխարհի Թագաւոր օծած և հաստատած է. և Թէ Անոր Թագաւորութիւնը այժմ եկած է, ու աշխարհիս ժողովուրդներուն յոյն է:

Թէ՛ Բանասերիու Սատանան Աստուծոյ և մարդոց մեծ թշնամին է: Դարերով՝ անիկա աշխարհի իշխանը եղած, Աստուծոյ անուանը մեծ նախատինք բերած և մարդը անկումի առաջնորդած է. Թէ՛ Սատանային ու անոր զործակալներուն վաստութեանց պատճառաւ է որ երկրիս վրայ գոյութիւն ունին տառապանք և անձկութիւն. և Թէ՛ ինչպէս որ Աստուած կը յայտարարէ, ա՛լ հասած է ժամանակը՝ երբ Սատանային իշխանութիւնը յաւիտեան վերջ պիտի դնեն. Թէ՛ 1914-ին Սատանան երկինքէն վար երկրիս վրայ ձգուեցաւ. Թէ՛ քիչ վերջ՝ Եհովան Քրիստոսի միջոցաւ պիտի կործանէ Սատանային իշխանութիւնը ու երկրիս վրայ անոր ունեցած կազմակերպութիւնը. սակայն Թէ՛ այդ բանը ընելէն առաջ՝ Եհովա Աստուծոյ բացայայտ կամքն ու պատուէրն է որ իր վկաները ազգարարութեան այս պատգամը տան իշխողներուն ու ժողովուրդին, որպէս զի ամէն անոնք որ կը լսեն՝ Աստուծոյ և Անոր Թագաւորութեան կողմը անցնին և այդպէս ապաւին դաննն նեղութեան ժամանակ. Թէ՛ արուելիք ազգարարութեան վկայութիւնը, համառօտարար, հետեւեալն է.

Աշխարհիս քրիստոնէութիւն դաւանող եւ այդպէս «Քրիստոնեայ Աշխարհ» կոչուող ազգերը Եհովա Աստուծոյ անունը անպատուած եւ նախատած են, ու Սատանային կազմակերպութեան մէկ մասը կը կազմեն եւ պիտի բնաջնջուին:

«Հեթանոս» կոչուող միւս ազգերն ալ նախատած են Աստուծոյ անունը, որոնք Սատանային կազմակերպութեան մէկ մասն են, եւ նմանապէս պիտի իյնան: Աստուած Հեթանոսներէն աւելի մեծ լոյս եւ պատեհութիւններ շնորհած է «Քրիստոնեայ Աշխարհ»-ին, սակայն «Քրիստոնեայ Աշխարհ»-ը իր այս բոլոր պատեհութիւնները չարաչար գործածած եւ անոնց հանդէպ անհաւատարիմ դտնուած է. ուստի Եհովայի ձեռքէն աւելի մեծ պատիժ պիտի ստանայ: Քիչ վերջ՝ Տիրոջ անունը կրող «Քրիստոնեայ Աշխարհ»-ին վրայ պիտի դայ այն ամենամեծ նեղութիւնը որ երբէք եկած ըլլայ մարդկութեան վրայ-- Երեմ. ԻՆ. 29--35:

Որպէս զի մարդիկ աւելի լաւ հասկնան թէ Աստուած ինչո՞ւ համար այդ մեծ նեղութիւնը ազգերուն վրայ կը բերէ՝ Ս. Գրքին մէջ Իսրայելացիներու պատմութիւնը գրուեցաւ եւ այս առթիւ կը յիշենք: Տէրը յայտարարած է թէ Հրիաներուն պատիժը կը նախապատկերէր «Քրիստոնեայ Աշխարհ»-ին կամ աշխարհիս դաւանանքով «քրիստոնեայ» եղող ազգերուն վրայ դալիւքը: Հրեաները Աստուծոյ ժողովուրդն էին, սակայն անոնք իրենց ուխտին հաւատարիմ չմնացին եւ կոպակաշտական սովորութիւններու դիմեցին: Աստուած Իր մարգարէները զրկեց, որոնք Հրեաներուն ազգարարեցին թէ Տիրոջ նպատակն էր իրենց ազգը կործանել իրենց անհաւատարմութեանը պատճառաւ: Հրեաներուն առաջնորդները անտեսեցին սոյն ազգարարութիւնը, արհամարհեցին Աստուծոյ մարգարէներուն վկայութիւնը, եւ յետոյ՝ սուտ կերպով մարգարէացան ժողովուրդին թէ՛ այդ ազգին ունէ վնաս պիտի չը-

դար: Բայց ատկէ քիչ յետոյ՝ հրէական ազգը դոյութենէ դադրեցաւ: Այդ պատմութիւնը ներկայիս ալ կը կրկնուի:

ԵՀՈՎԱՆ ճշմարիտ քրիստոնէութիւնը անկեց իբրեւ անարատ ու պատուական բան մը (Երեմեայ Բ. 21). սակայն Յիսուս Քրիստոսի հաւատարիմ առաքեալներուն մահէն քիչ վերջ՝ կղերներու աջակցութեամբն ու քաջալերութեամբը՝ աշխարհի առեւտրական ու քաղաքական իշխանները «քրիստոնէութիւն» որդեգրեցին եւ զայն իրենց կրօնքը յայտարարեցին, եւ յետոյ Աստուծոյ կանոնները փոխեցին իրենց անձնական շահախնդիր նպատակներուն յարմարեցնելու համար, ու Աստուծոյ օրէնքները՝ մասնաւորապէս «յաւիտենական ուխտ»-ը՝ բեկանեցին ու Բարձրելոյն անուանը մեծ նախատինք բերին: Աշխարհիս գլխաւոր ազգերը այսօր «քրիստոնեայ» կը կոչուին, եւ անոնք ի գործ կը դնեն կրօնական ձեւակերպութիւն մը որուն «քրիստոնէական կրօնք» անունը կուտան, եւ միւս կողմանէ ալ՝ անոնց առաջնորդները կ'ուրանան Աստուծոյ Խօսքին ներշնչուած ու ճշմարիտ ըլլալը, կ'ուրանան Յիսուս Քրիստոսի արեան մարդոց փրկազին ըլլալը, կ'ուրանան թէ Աստուծոյ Թագաւորութիւնը երկրիս ժողովուրդները պիտի վերահաստատէ ու օրհնէ: Հետեւաբար՝ «կազմակերպեալ Քրիստոնէութիւն»-ը Սատանային կազմակերպութեան անբաժան մէկ մասն է, եւ հակառակ է Աստուծոյ եւ Անոր Թագաւորութեան, եւ այդ պատճառաւ պիտի ոչնչացուի՝ որպէս զի արդարութեան Թագաւորութիւնը տիրէ աշխարհիս վրայ:

Համաշխարհային պատերազմը, եւ անոր բերած նեղութիւնները, 1914-ին վրայ հասան ճիշդ Յիսուս Քրիստոսի մարգարէութեան համաձայն, եւ բովանդակ «Քրիստոնեայ Աշխարհ»-ի բացարձակ ասպցոյց տուաւ թէ՛ աշխարհը ալ վերջացած եւ Քրիստոսի Թագաւորութիւնը մօտեցած էր (Մատ-

թէնսի ԻԳ. 3-14) : Այս իրողութիւնները «Քրիստոնեայ Աշխարհ»-ի առաջնորդներուն մասնաւոր ուշադրութեան յանձնուեցան : Եթէ «Քրիստոնեայ Աշխարհ»-ը Աստուծոյ խրատին անսարով Անոր կոչումին մէջ մնար՝ կարելի է թէ կործանումէ ազատէր : «Կազմակերպեալ Քրիստոնէութիւն»-ը ոչ միայն արհամարհական վերաբերում ցոյց տուաւ Աստուծոյ խրատին նկատմամբ, հասցա նաեւ ան բացայայտօրէն որդեգրեց Սատանային կեղծ գործը (ազգաժողովը) եւ դայն կոչեց երկրիս վրայ Աստուծոյ թագաւորութեան քաղաքական արտայայտութիւնը : «Քրիստոնեայ Աշխարհ»-ին առաջնորդները եւ առեւտրական, քաղաքական ու կրօնական բախտազուշակները այժմ բացէ ի բաց կը յայտարարեն թէ՛ ներկայ տառապալի ու անձկալի կացութիւնը ժամանակաւոր բնոյթ միայն ունի, որ քիչ ատենէն պիտի անցնի, եւ թէ՛ անարդար ու անկատար մարդերով կառավարուած ազգերը պիտի կրնան տեւական խաղաղութիւն ու բարգաւաճութիւն հաստատել : Հրեաներուն խօսող սուտ մարգարէներուն նման՝ մեր օրուան այս գուշակողներն ալ սուտ գուշակութիւններ կ'ընեն (Երեմեայ ԻԸ. 1-17) : Թո՛ղ ժողովուրդը գիտնայ թէ՛ «Քրիստոնեայ Աշխարհ»-ը բնաւ պիտի չվերականգնի, հասցա քիչ ատենէն պիտի տապալի այն ամենամեծ նեղութեան մէջ՝ որ երբէք եկած ըլլայ աշխարհի ոեւէ ազգի վրայ : Անոր կործանումը առաջ պիտի գայ Եհովա Աստուծոյ եւ Անոր Թագաւորին ի գործ դրած պատիժին միջոցաւ, եւ ոչ թէ աղքատները հարուստներուն դէմ կոռելով :

Եհովան կը յայտարարէ թէ՛ նեղութեան շրջանին այնքան բազմաթիւ անձեր պիտի սպաննուին՝ որ ողջ մնացողները պիտի չթաղեն զանոնք : Ան կը յայտարարէ նմանապէս թէ՛ մաս մը մարդիկ ողջ պիտի մնան, նեղութեան մէջէն պիտի ազատուին. եւ թէ այդ ազատուողները անոնք պիտի ըլլան՝ ո-

րոնք ներկայիս Աստուծոյ կամքը գիտնալ ու կատարել կը ջանան :

Աշխարհի յոյսը Աստուծոյ քագաւորութիւնն է ու անկէ զատ ուրիշ յոյս չկայ : Մեծ նեղութենէն անմիջապէս վերջ՝ Եհովայի թագաւորութիւնը խաղաղութիւն ու բարգաւաճութիւն պիտի հաստատէ երկրիս վրայ : Հետեւաբար բոլոր օրինապահ մարդիկ պէտք է որ ներկայիս ջանադիր ըլլան Աստուծոյ թագաւորութեան մասին տեղեկութիւն ստանալու, Անոր թագաւորութեան համար կանգնելու, Աստուծոյ ու Անոր Թագաւորին հպատակութիւն յայտնելու, եւ այդպէս ի վիճակի ըլլան ստանալու համար այն տեւական օրհնութիւնները՝ որոնք պիտի շնորհուին Եհովայի ու Անոր Թագաւորին հնազանդ ու հաւատարիմ եղողներուն :

«Բորբաղանտ կամ դաւանալիս ընելու ոգիով մղուած մէկ ուրիշ աղանդ»-ի մը կողմէ չէ որ կը արուի ազդարարութեան այս վկայութիւնը : Ատիկա Եհովայի վկաներուն կողմէն է որ կը արուի : Այս վկայութիւնը տուողները անդամ գտնելու կամ դրամ մուրալու ետեւէ չեն : Ամէն անոնց վրայ՝ որոնք ամբողջովին Անոր թագաւորութեան նուիրուած են՝ Եհովան պարտք դրած է ազդարարութեան այս վկայութիւնը տալու : Այս վկաները՝ վկայութիւնը եւ ազդարարութիւնը տալուն մէջ պատասխանատու են, իսկ լսողներն ալ պատասխանատու են իրենց հետեւելիք ընթացքին համար :

Մենք Աստուծոյ եւ Անոր թագաւորութեան նրկատմամբ բացարձակ հպատակութիւն կը յայտարարեմք, եւ մեզի համար ուրախութիւն մըն է Անոր վկաներն ըլլալ ու Անոր վկայութիւնը տալ Իր անուան փառքին համար : Մեր հաւատքը մեզ կ'արդիլէ պատերազմի կամ այնպիսի բանի մասնակցելէ՛ որ կրնայ ոեւէ կերպով վնաս պատճառել մարդոց : Մենք Եհովայի յաւիտենական խաղաղարար թագաւորութեան համար կը կանգնինք :

Ա՛լ հասած է ԺԱՄԱՆԱԿԸ որ Ե՛նովայի մեծ ա-  
նունը ջատագովուի. եւ իբրեւ Անկէ արտօնուած  
վիաներ՝ Անոր պատուէրին հնազանդելով՝ այժմ  
հանդիսաւոր կերպով այս աղբարարութիւնը կ'ը-  
նենք եւ վկայութիւնը կուտանք:

Շատ մօտ ատենէն՝ Աստուած բնաջինջ պիտի  
ընէ Սատանային ամբողջ կաղմակերպութիւնը, ա-  
տոր մէջ ըլլալով «Քրիստոնեայ Աշխարհ»-ը եւ այն  
բոլոր ազգերը՝ որոնք ժողովուրդը կը կեղեքեն եւ  
Անոր անունը կ'անարգեն: Այդ մեծ ոչնչացումէն  
անմիջապէս վերջ՝ Աստուած Քրիստոսի միջոցաւ  
երկրիս վրայ լիովին պիտի հաստատէ Իր արդա-  
րազատ կառավարութիւնը: Ուրեմն՝ թո՛ղ ժողո-  
վուրդները դադրին մարդոցմէ ծնունդ առած բա-  
րեկարգչական ծրագիրներու ուշադրութիւն ընծա-  
յելէ: Աշխարհի յոյսը միայն Ե՛նովա Աստուծոյ Թա-  
ղաւորութիւնն է: Ի ո՛ր անոնք՝ որ արդարութիւն  
կը սիրեն՝ թո՛ղ բացարձակ հպատակութիւն յայտ-  
նեն Ե՛նովայի ու Անոր Թաղաւորութեան՝ եւ ստա-  
նան Անոր պարզեւած օրհնութիւնները:

## ՆՈՐ ԱՆՈՒՆ ՄԸ

Քրիստոնեաներու կողմէ միջազգային հա-  
մաժողով մը տեղի ունեցաւ Օհայոյի Գոլում-  
պոս քաղաքին մէջ 1931, Յուլիս 24-էն մինչեւ  
30-ը: Անոնք իրարու քով համախմբուած էին  
երկրիս գաւազան ազգերէն, ներկայացնելով  
շատ մը լեզուներ: Յուլիս 26-ին տեղի ունե-  
ցած մեծ ժողովի մը մէջ՝ հետեւեալ որոշմա-  
ցիքը միաձայն հաւանութեամբ որդեգրուե-  
ցաւ, զոր կը հրատարակենք՝ թէ՛ հայ ժողո-  
վուրդին եւ թէ՛ աշխարհիս միւս բոլոր ժողո-  
վուրդներուն տեղեկութեանը համար:

(Հրատարակչական ծանօթութիւն)

ՈՐՈՎ ՀԵՏԵԻ՝ 1874-ի ժամանակները, աստուա-  
ծային մարդարէութեան իրականացման համաձայն,  
Տէր Յիսուս Քրիստոս սկսաւ «Ե՛նովայի առջեւ  
ձամբայ պատրաստել» եւ երկրիս վրայ եղած Իր  
հաւատարիմ հետեւորդներուն վերբնծայել աւելի  
յստակ ըմբռնում մը այն հիմնական ճշմարտութիւն-  
ներուն մասին՝ զորս Յիսուս եւ Անոր առաքեալները  
քարոզած եւ որոնք սակայն, դարերով խաւարի մէջ  
պահուած էին սուտ վարդապետութիւններ քարո-  
զող ուրիշ անձերու կողմէ. եւ

ՈՐՈՎ ՀԵՏԵԻ այդ թուականին ու անկէ յետոյ՝  
աւելի քան քառասուն տարուան ժամանակաշրջան  
մը, Քրիստոս Յիսուսի հաւատարիմ մէկ հետեւորդը  
ու Ե՛նովա Աստուծոյ մէկ ծառան՝ Չարլզ Թ. Բըսըլ՝  
իբր Քրիստոսով եղբայրներուն խումբ մը առաջնոր-  
դեց քարոզելու եւ ուսուցանելու համար աստուա-  
ծային Մօսքը, նամանաւանդ՝ Քրիստոսի երկրորդ


անդամ դալը, Անոր Թագաւորութեան հաստատուելը, եւ երկրիս վրայ մարդոց կատարելութեան մէջ վերահաստատուելը. եւ թէ՛ այդ գործը կանոնաւոր կերպով առաջ տանելու համար՝ Քրիստոնեաներու վերոյիշեալ խումբը առաջ բերաւ Դիտարանի Ս. Գրոց եւ Տետրակի Ընկերութիւն, Միջազգային Ս. Գիրք Ուսանողաց Միութիւն եւ Ժողովուրդին Բեմի Ընկերութիւն անունով ճանչցուած ընկերակցութիւնները, զորս իրենք գործածած են եւ դեռ կը գործածեն հրատարակելու համար դիրքեր, պարբերաթերթեր եւ Ս. Գրոց վերարեբեալ ուրիշ գրականութիւններ. եւ թէ՛ ժամանակի ընթացքին՝ քրիստոնեաներու այդ խումբը սկսաւ ճանչցուիլ իրբեւ՝ «Բըսըլականներ», «Հաղարամէի Արշալոյսի Ժողովուրդ», «Միջազգային Ս. Գիրք Ուսանողաց Միութիւն», եւ ուրիշ անուններով. եւ

ՈՐՈՎ ՀԵՏԵՒ Չարլզ Թ. Բըսըլի մահէն քիչ վերջ՝ այդ գործին մէջ իրեն ընկերացողներուն մէջ բաժանում տեղի ունեցաւ, որուն իբր հետեւանք՝ մաս մը անձինք հեռացան Դիտարանի Ս. Գրոց եւ Տետրակի Ընկերութեան, եւ ատիկ իվեր անոնք մերժած են այդ Ընկերութեան հետ գործակցիլ եւ անոր կատարած գործին մէջ բաժին ունենայ. եւ թէ անոնք Դիտարանի Ս. Գրոց եւ Տետրակի Ընկերութեան եւ վերոյիշեալ միւս ընկերակցութիւններու կողմէ՛ Դիտարանի մէջ եւ վերջին ուրիշ գրականութիւններով հրատարակուած ձեւարարութիւններուն համաձայն չեն, եւ Աստուծոյ Թագաւորութեան ներկայ պատգամը ու Սատանային կազմակերպութեան բոլոր մասերուն դէմ մեր Աստուծոյն վրէժխնդրութիւնը յայտարարելու սոյն Ընկերութեան գործին հակառակած են ու հիմա ալ կը հակառակին. եւ թէ՛ այդ հակառակողները իրենք իրենցմէ զանազան ու բազմաթիւ խումբեր կազմած եւ իրենց վրայ առած են ու կը գործածեն՝ «Ս. Գիրք Ուսանողներ», «Միացեալ Ս. Գիրք Ու-


սանողներ», «Հովիւ Բըսըլի Կողմէ Հրատարակուած ձեւարարութիւնները Քարոզող Բըսըլականներ», «Հաստատ Կանգնողներ», եւ նմանօրինակ ուրիշ անուններ, որոնց բոլորն ալ առիթ կուտան շփոթութիւն ու թիւրիմացութիւն առաջ բերելու:

ՀԵՏԵՒ Ա.Բ.Ս.Ր, այժմ, որպէս զի մեր իրական դիրքը ճանչցուի, եւ հաւատարմով թէ Աստուծոյ կամքին համաձայն է, ինչպէս որ Անոր Խօսքը կը յայտնէ, Կ՝ՈՐՈՇԵՆՔ

Թէ՛ մենք մեծ սէր ունինք եղբայր Չարլզ Թ., Բըսըլի նկատմամբ, եւ թէ՛ մենք ուրախութեամբ կը խոստովանինք թէ Տէրը զայն գործածեց ու մեծապէս օրհնեց անոր գործը. եւ սակայն՝ Աստուծոյ Խօսքին համաձայն՝ չենք կրնար հաւանութիւն տալ «Բըսըլականներ» անունով կանչուելու. թէ՛ Դիտարանի Ս. Գրոց եւ Տետրակի Ընկերութիւնը եւ Միջազգային Ս. Գիրք Ուսանողաց Միութիւնը ու Ժողովուրդին Բեմի Ընկերութիւնը պարզապէս ընկերակցութիւններու անուններ են, եւ մենք՝ իբրեւ քրիստոնեաներու խումբ մը՝ այդ ընկերակցութիւնները կը պահենք, կը կառավարենք ու կը գործածենք Աստուծոյ պատուէրներուն համաձայն մեր գործը յառաջ տանելու նպատակաւ. այսուհանդերձ՝ այդ անուններուն եւ ոչ մէկը կրնայ պատշաճօրէն կցուիլ կամ պատկանիլ մեզի իբրեւ քրիստոնեաներու խումբի մը որ մեր Տիրոջ ու Վարդապետին՝ Քրիստոս Յիսուսի՝ քայլերուն կը հետեւինք. թէ՛ մենք Ս. Գիրքը ուսումնասիրողներ ենք, սակայն՝ որպէս Ընկերակցութիւն մը կազմող քրիստոնեաներու խումբ մը՝ կը մերժենք մեր վրայ առնել կամ կանչուիլ «Ս. Գիրք Ուսանողներ» անունով, եւ կամ նմանօրինակ ուրիշ անուններով, որոնք որպէս թէ Տիրոջ առջեւ ունեցած մեր պատշաճ դիրքը ի յայտ կը բերեն. մենք կը մերժենք ոեւէ մարդու անունը կրել կամ անով կանչուիլ:



ԱՍՏՈՒԾՈՑ ԴԱՏԱՍԱՆԸ ԸՆԴԴԷՄ ԳՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՇԽԱՐՀԻ  
 ԷԴՈՒՔ ՍՈՐԷՆ Վախցաք, ու ևս բոլոր ձեր վրայ պիտի ընկնի,  
 Կ'ըսէ Տէր Եհովա: Դուք սրտի պիտի իյնաք—  
 Եղեկիելի ԺԱ. 8, 10:



Կ'ԱՁԴԱՐԱՐԵՆ ԳՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՇԽԱՐՀԻ  
 'Այս պատգամը պետք է որ հռչակուի, և անկէ ետեւ վերջը  
 պիտի ըսայ՝— Տես Մատթէոսի ԻԴ. 14, 21, 22,  
 նաև Եղեկիելի Գ. 8—11:

Թէ՛ մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի ընտիր արեամբը գնուած, Եհովայէն արդարացուած ու յղացուած եւ Անոր թագաւորութեան կանչուած ըլլալով, մենք բացարձակ հաւատարմութիւն ու նուիրում կը յայտարարենք Եհովայի ու Անոր թագաւորութեան նկատմամբ. թէ՛ մենք Եհովա Աստուծոյ ծառաներն ենք՝ պաշտօն ստացած ըլլալով Անոր անունովը որոշ գործ մը կատարելու, եւ Անոր պատուէրին հնազանդելով՝ Յիսուս Քրիստոսի վկայութիւնը տալու, ու ժողովուրդին գիտցնելու թէ Եհովան է ճշմարիտ ու Ամենակալ Աստուածը. ուստի մենք հրճուանօք կ'որդեգրենք եւ կ'ընդունինք այն անունը զոր մեր Տէր Աստուծոյ բերանը արտասանած է, եւ մենք կը փափաքինք ճանչցուիլ ու կանչուիլ այդ անունով, որ է՝ Եհովայի Վկայութեան յօդ. 10--12, ԿԻ. 2, ԿԵ. 15, Յայտնութեան ԺԲ. 17, Բ. 17:

Իբրեւ Եհովայի վկայները՝ մեր միակ նպատակն է Անոր պատուէրներուն հնազանդիլ, գիտցնելու համար թէ՛ Նա է միակ ճշմարիտ Աստուածը. թէ՛ Անոր Խօսքը ճշմարիտ է եւ Անոր անունը արժանի է ստանալու ամէն փառք ու պատիւ. թէ՛ Քրիստոս Աստուծոյ օձեալ Թագաւորն է՝ զոր Նա իր իշխանութեան գահին վրայ դրած է. թէ՛ Անոր թագաւորութիւնը այժմ եկած է, եւ Տիրոջ պատուէրներուն հնազանդելով մենք պարտինք այժմ յայտարարել այս ուրախ լուրերը իբրեւ աղբերուն վկայութիւն, եւ իշխողներուն ու ժողովուրդին տեղեկացնել Սատանային անխիղճ ու կեղեքիչ կաղձակերպութեան եւ մասնաւորապէս «Քրիստոսնայ Աշխարհ»-ի մասին, որ Սատանային տեսանելի կազմակերպութեան ամենամբարիչտ մասն է. մենք նմանապէս պարտինք յայտարարել մօտ ատենէն Սատանային կաղձակերպութիւնը կործանելու Աստուծոյ նպատակին մասին, եւ թէ՛ ինչպէս՝ այդ մեծ զործողութենէն անմիջապէս վերջ՝ Քրիստոս

Թագաւորը երկրիս հնազանդներուն պիտի ընծայէ խաղաղութիւն ու բարգաւաճութիւն, ազատութիւն ու առողջութիւն, երջանկութիւն ու մշտնջենական կեանք. թէ՛ աշխարհի յոյսը միայն Աստուծոյ թագաւորութիւնն է ու ատկէ զատ ուրիշ յոյս չկայ, եւ թէ՛ այս պատգամը պարտին տալ անոնք որ որպէս Եհովայի վկայները ճանչցուած են:

Մենք խոնարհաբար կոչ կ'ընենք ամբողջովին Եհովայի ու Անոր թագաւորութեան նուիրուած բոլոր անհատներուն՝ որ այս բարի լուրերը ուրիշներուն յայտարարելու գործին մասնակցին, որպէս զի Տիրոջ արդարութեան դրօշակը վեր բարձրացուի ու աշխարհիս ժողովուրդները դիտնան՝ թէ՛ ո՛ւր կրնան դանել ճշմարտութիւնն ու ազատութեան յոյսը. եւ թէ՛ ամենէն աւելի՝ Եհովա Աստուծոյ մեծ ու սրբազան անունը ջատագովուի եւ փառաւորուի:

ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐ

ԵՀՈՎԱ ԱՍՏՈՒԱԾ մեծ Հոգին է, «անմերձեանալի լոյսի մէջ բնակած, զոր մարդոցմէ մէ՛կը չը տեսաւ, ոչ ալ տեսնելու կարող է», Երանելին ու մի միայն Հոգորը, որուն մէջ կը բնակի գերագոյն գօրութիւն» (Ա. Տիմ. 2. 16, 15): Քրիստոս Յիսուս Եհովայի բուն պատկերը եւ ամէն բաներու ժառանգը ու Աստուծոյ օձեալը եւ աշխարհի ալ օձեալ Թագաւորն է-- Եբր. Ա. 2--4:

Թագաւորութիւնը պատշաճօրէն Աստուծոյ թագաւորութիւնը կոչուած է, որովհետեւ ատիկա Անոր թագաւորութիւնն է եւ ատոր ամբողջ գօրութիւնն ու իշխանութիւնը Եհովայէն կուգայ: Ատիկա նաեւ Քրիստոսի թագաւորութիւնը կոչուած է՝ ինչու որ Քրիստոս՝ Եհովայի կողմէ Անոր գահին վրայ դրուած օձեալ Թագաւորն է (Ղուկասու ԻԲ.

28--30, Սաղմ. Բ. 6): Մարդկային աչքը երբէք չհրնար տեսնել Տէր Յիսուս Բրիտանացի, այն պատճառաւ որ Ան հոգեղէն է եւ մարդկային աչքերը չեն կրնար տեսնել հոգեղէն արարած մը (Յովհաննու ԺԶ. 16, Ա. 18, Ելից 1Գ. 20, Ա. Յովհաննու Դ. 12): Ուրեմն որոնք պիտի ըլլան երկրիս վրայ այն տեսանելի կառավարիչները՝ որոնք անտեսանելի Թագաւոր Բրիտանոսի կողմէ ու մարդոց օգնութեան համար պիտի գործեն:

Այս հարցման օրինաւոր պատասխանը խիստ մեծ կարեւորութիւն ունի, եւ այդ պատասխանը պէտք է որ բացարձակապէս Ս. Գրոց վրայ հաստատուած ըլլայ: Պատասխանը նախ համաձայն կերպով կուտանք՝ եւ ապա այդ պատասխանին ուղիղ ըլլալը պաշտպանելու համար ապացոյց կը ներկայացնենք Ս. Գրքէն:

Բրիտանոսի Թագաւորութեան շրջանին երկրիս կառավարիչները պիտի ըլլան այն հաւատարիմ եւ ուղղամիտ մարդիկը՝ որոնք 1900 տարի առաջ երբ Բրիտանոս զեռ երկրիս վրայ եկած չէր՝ միշտ հաւատարմօրէն ապրեցան Աստուծոյ հետ ու մեռան, եւ որոնք Բրիտանոս մեծ Թագաւորին ներկայացուցիչներն ըլլալով՝ Անոր հրամաններուն համաձայն պիտի գործեն: Բրիտանոսի այդ հաւատարիմ ներկայացուցիչներէն պիտի ըլլան Աբէլ, Ենոփք, Նոյ, Աբրահամ, Իսահակ, Յակոբ, Գեղէօն, Յեփթայէ, Սամփոն, եւ բոլոր հաւատարիմ մարդարէնները, որոնք իրրեւ կառավարիչներ պիտի գործեն-- Տես Եբրայեցիս ԺԱ. դուխը:

Երկար դարերէ իվեր է որ այդ մարդիկը մեռած են, բայց քիչ վերջ՝ անոնք մահուընէ պիտի յարուցուին եւ իրրեւ Աստուծոյ Թագաւորութեան ներկայացուցիչներ՝ իրենց պատասխանատու դիրքերը պիտի գրաւեն երկրիս վրայ: Անոնք զերեզմանէն դուրս պիտի բերուին մարմնով ու մտքով կատարեալ, պիտի ըլլան ուղղամիտ ու անկեղծ եւ

որոշորովին Տիրոջ նուիրուած, եւ միշտ ուղիղ կերպով ու ի նպաստ ժողովուրդին պիտի գործեն՝ ինչու որ Տէրը պիտի ըլլայ անոնց գործունէութեան ընթացքը ղեկավարողը:

Որտա զժուար է մարդոց համար ըմբռնել եւ լիովին ընդունիլ այն ապշեցուցիչ ճշմարտութիւնը թէ՛ բարի, անկեղծ, ուղղամիտ եւ արդար մարդիկ են որ մարդոց մէջ երկրիս վրայ կառավարութեան գործերը պիտի վարեն եւ ուղղեն, եւ թէ՛ անոնք ոեւէ մէկուն ոեւէ անարդարութիւն երբէք պիտի չընեն: Այդ զժուարութեան պատճառը այն է որ՝ անցեալ դարերուն մէջ երկրիս կառավարիչները ուղղամտութենէ չեն առաջնորդուած: Սակայն՝ երբ հասարակ ժողովուրդը սկսի ճշմարտութիւնը տեսնել ու զնահատել՝ վիթխարի բեռ մըն է որ պիտի վերնայ իրենց վրայէն: Անուղղամտութիւնը, բռնապետութիւնը եւ ամբարշտութիւնը այնքան երկար առեն տիրած են՝ որ շատ մը մարդիկ այն եղբակացութեան եկած են թէ՛ միշտ ալ այդ վիճակը դոյութիւն պիտի ունենայ: Բայց բռնակալութեան շրջանը ա՛լ վերջանալու վրայ է՝ ու ան երբէք պիտի չվերադառնայ (Նաւում. Ա. 9): Գնահատելու համար այս յայտարարութիւնը եւ նմանապէս այն յայտարարութիւնը՝ թէ՛ Բրիտանոսի Թագաւորութեան ատեն երկրիս վրայ յաւիտեան արդարութիւն պիտի տիրէ, նախ կարեւոր է ըմբռնել թէ՛ ի՞նչու համար երբէք թոյլատրուած է որ անուղղամտութիւնն ու ամբարշտութիւնը երկրիս վրայ դոյութիւն ունենան: Ս. Գիրքը այդ պատճառը որոշապէս ցոյց կուտայ, զոր հոս կը ներկայացնենք:

Եհովա Աստուած առաջին մարդը ստեղծեց, անոր Ադամ՝ կատարեալ մարդ՝ անուր տուաւ, եւ երկիրը մարդուն շնորհեց իրրեւ անոր բնակարանը (Եսայ. ՈՆ. 12, 18): Ադամ կատարեալ՝ եւ երկրային ստեղծագործութեան զլիաւորն էր (Երկ. Օր. 1Բ. 4): Երկրային ամբողջ ստեղծագործութիւ-

նը, մարդն ալ մէջը հաշուերով, Աստուծոյ կազմակերպութեան մէկ մասը՝ կազմեց եւ Արուսեակին անմիջական հոգատարութեան տակ դրուեցաւ, որ Ս. Գրոց մէջ «ծածկող քերովբէ» կոչուած է, այն իմաստով թէ ան ուրիշներու վրայ անմիջական իշխանութիւն ունէր (Եգեկ. ԻԸ. 13-15): Մարդը Եհովայի ստեղծագործութիւնը եղած եւ իր կեանքը Ամենակալէն ստացած ըլլալով՝ իր առանձնաշնորհն ու պարտականութիւնն էր հաւատարիմ եւ ուղիղ ըլլալ եւ Եհովա Աստուծոյ բացարձակ հպատակութիւն յայտնել: Արուսեակ, յիմարաբար, փափաքեցաւ անձամբ մարդուն հպատակութիւնն ու նըւիրումը ստանալ՝ որպէս զի ինք «Բարձրելոյն նմանի» (Եսայ. ԺԴ. 12-14): Իր փափաքը գլուխ հանելու համար՝ Արուսեակ Աստուծոյ դէմ ապստամբեցաւ եւ մարդը Եհովային անհաւատարիմ ըլլալու ու անոր հպատակութիւնը իրեն (Արուսեակի) ընծայելու մղեց: Այդ յանցանքին համար՝ մարդը մահուան դատաւարտուեցաւ, եւ ասիկէ յետոյ Ադամէն ու Եւայէն ծնած՝ բոլոր մարդիկը ժառանգեցին անոր յանցանքին հետեւանքները եւ ատոր համար բոլորն ալ անկատար կամ մեղաւոր կոչուած են (Մաղմ. ՄԱ. 5, Հոովմ. Ե. 12): Ադամ՝ որպէս կատարեալ մարդ՝ Աստուծոյ հանդէպ ունեցած իր անարատութեան մէջ չմնաց, եւ այդ պատճառաւ Արուսեակ Եհովա Աստուածը աստղեկը կանչեց որ եթէ կարող է՝ երկրիս վրայ դնէ այնպիսի մարդ մը՝ որ Աստուծոյ հանդէպ ունեցած իր ուղղամտութիւնը պահէ եւ Անոր հաւատարիմ ըլլայ, մինչեւ անգամ ամենախիստ քննութեան տակ: Աստղեկը կանչելու այդ հրաւերը՝ Եհովայի թէ՛ խօսքն ու անունը եւ թէ՛ տիեզերքի զերագոյն զօրութիւնն ըլլալը հարցի առարկայ ըրաւ: Աստուած կրնար Արուսեակը անմիջապէս սպաննել, սակայն, այդ կերպով, ուրիշ արարածներու մտքին մէջ հարցը վճռուած պիտի չըլլար: Աստուած ողորմա-

ծարար ապստամբին թայլ տուաւ որ իր լաւագոյն ջանքը թափէ իր մարտահրաւերը հաստատելու համար: Հետեւաբար Եհովան ընդունեց մարտահրաւերը՝ եւ իր յարմար ժամանակին սպասեց բոլոր մարդոց ցոյց տալու թէ՛ ինք, Եհովան, է միակ ճշմարիտ Աստուածը, զերագոյն էակը, եւ կենաց միակ աղբիւրը:

Ապստամբութենէն վերջ՝ Աստուած Արուսեակին անունը Սատանայի, Բանսարկուի, Օձի եւ Վիշապի փոխեց, եւ անկէ իվեր նա այդ անուններով ճանչցուած է: Այդ անունները միայն բաւական են բոլոր արարածներուն աղբարարելու թէ՛ Բանսարկուն Աստուծոյ թշնամին է: Նոյն ժամանակ՝ Աստուած յայտարարեց թէ՛ իր նպատակն էր հայթայթել «սերունդ» մը՝ որ որոշեալ ատենին պիտի ոչնչացնէր Սատանան ու անոր ամբարիշտ կազմակերպութիւնը եւ պիտի հաստատէր արդարադատ կառավարութիւն մը: Ատիկա զաղանիք մըն էր՝ որ խոստումը տրուելէն յետոյ դարերով անհասկնալի մնաց: Ներկայիս որաչապէս յայտնուած է թէ՛ խորհրդարանօրէն՝ Աստուած «ամուսին»-ն է, եւ թէ՛ իր «կին»-ը իր կազմակերպութիւնն է, եւ թէ՛ կնոջ (իր կազմակերպութեան) առաջ բերած խոստացեալ «սերունդ»-ը՝ թագաւորութիւնն է, Քրիստոս Յիսուս անոր գլուխը կամ Թագաւորը եւ երկրիս օրինաւոր իշխանը ըլլալով: Թագաւորութիւնը դործի լծուելէն առաջ ուրիշ դործ մը պիտի կատարէր, եւ Եհովան կատարեց այդ դործը, որն էր հետեւեալը.

Մարդը, իր յանցանքին պատճառաւ, մշտնջենական ոչնչացման դատաւարտուած պիտի մնար՝ եթէ զինք փրկելու համար կարգադրութիւն մը չըլլար: Քանի որ փրկութիւնը գլուխ կրնար հանել ուրիշ կատարեալ մարդումը Ադամին տեղ կամաւորապէս մեռնելովը միայն, ուրեմն փրկութեան այդպիսի կարգադրութիւն մը՝ միայն Աստ-

ւած կրնար ընել: Այդ պատճառաւ՝ Յիսուս երկրի վրայ զրկուեցաւ ու կնոջմէ մը ծնելով մարդ եղաւ, եւ ուրիշ մարդոց նման՝ մարդոց մէջ բնակեցաւ (Յովհ. Ա. 14, Գաղ. Դ. 4): Իբրեւ մարդ՝ Նա կամաւորապէս թոյլ տուաւ որ զինքը մեռցնեն որպէս մեղաւորին փոխարէնը, ու այդպէս Նա ձեռք բերաւ փրկագինը կամ փրկանքը, որպէս զի կարելի ըլլայ մարդը ազատել մահէն ու անոր հետեւանքներէն: Հետեւաբար՝ Ս. Գրոց մէջ կատարեալ մարդ Քրիստոս Յիսուսի մահը կոչուած է՝ փրկանքի մեծ զոհադործութիւնը, որ հանուր մարդկութեան օգտին համար կատարուեցաւ (Եբր. Բ. 8, 9, Յովհ. Գ. 16, 17): Յիսուս որպէս մարդ իր կեանքը տուաւ, որպէս զի մարդիկ ապրելու իրաւունքը ունենային դարձեալ-- Մատթ. Ի. 28, Յովհ. հաննու Ժ. 10, 2. 48--51:

Յիսուսի խաչելութենէն առաջ՝ Աստուած այն խոստումն ըրած էր Անոր թէ՛ Ինք աշխարհի Թագաւորը պիտի ըլլար (Ղուկ. ԻԲ. 28--30): Յիսուս ըսաւ իր հաւատարիմ հետեւորդներուն թէ՛ իրենք թագաւորութեան մէջ իրեն պիտի ընկերանային, թէ՛ ապագային օր մը Ինք երկինքէն պիտի վերադառնար, զանոնք իր քով պիտի առնէր, իր թագաւորութիւնը պիտի հաստատէր եւ իրենք իրեն հետ պիտի ըլլային (Յովհ. ԺԴ. 1--4): Եհովան Յիսուսը մահուանէ յարոյց, Անոր կեանք եւ անմահութիւն շնորհեց, զԱնիկա երկինք բարձրացուց եւ յետոյ ըսաւ Անոր. 'Ապասէ՛ հիմա, մինչեւ որ հասնի թշնամին օտքերուս պատուանդան ընելու ժամանակը, ու այն ատեն է որ դուն պիտի թագաւորես' (Փիլիպ. Բ. 5--11, Սաղմ. ՃԺ. 1, 2, Երբայեցիս Ժ. 13): Հետեւաբար՝ Քրիստոսի երկրորդ գալուստը եւ Անոր թագաւորութեան հաստատուիլը այն մեծ դէպքերն են՝ որոնց քրիստոնեաները ըսպասած են ամենախոր հետաքրքրութեամբ: Քրիստոս Յիսուսի երկրորդ գալուստը ներկայիս տեղի

ունեցած է, Ան վերադարձած է, ու Աստուած զԱնիկա իր դահին վրայ զբաժնուց ըլլալով՝ Ան սկսած է թագաւորել-- Սաղմ. Բ. 6:

Եղեմէն մինչեւ Տէր Աստուծոյ թագաւորութեան հաստատման երկար ժամանակաշրջանին՝ Բանասարկու Սատանան իր ուղած ճամբուն հետեւած է եւ Աստուած չէ կաշկանդած զանիկա. յայտնապէս Եհովայի նպատակն էր թոյլատրել Սատանային որ իր ամենավատը ընէր, որպէս զի երբ Սատանան սանձելու ու անոր զօրութիւնը ոչնչացընելու ժամանակը դար՝ բոլոր բերանները յաւիտեան փակ մնային եւ չըսէին թէ Սատանան բարւոք կամ արդար պատահութիւն մը չունեցաւ՝ հաստատելու իր մարտահրաւէրը թէ՛ ուրիշ մարդ Եհովայի հանդէպ ունեցած իր ուղղամտութիւնն ու հաւատարմութիւնը պիտի չպահէր: Այդ երկար ժամանակամիջոցին՝ մարդիկ կառավարութիւններ կազմակերպած ու իշխել ջանացած են: Անոնց մէջէն շատեր՝ ժրջանօրէն աշխատած են լաւագոյն՝ եւ նոյն իսկ իտէալական՝ կառավարութիւն մը առաջ բերել, բայց անոնց բոլորն ալ խիստ անյաջող դուրս եկած ու Բանասարկու Սատանային խորամանկ ազդեցութեան ենթարկուած են, ինչու որ անոնք ինզքիւնքին ամբողջովին Աստուծոյ նուիրած ու Սատանային հակառակ կեցած չէին: Աշխարհիս մարդոց մեծ մասը՝ սատանայական կրօնքի ու սատանայական պաշտամունքի մը հետեւելով՝ թերացած են Աստուծոյ հանդէպ իրենց ունեցած հպատակութիւնն ու նուիրումը յայտնելու: Բացառաբար եղած են պզտիկ թւով հաւատարիմ մարդիկ, եւ այժմ այդ հաւատարիմներն են որ մեր նկատուութեան առարկայ պիտի ընենք:

#### ՀԱՒԱՏԱՐԻՄ ՄԱՐԴԻԿ

Եհովան՝ մասնաւոր կերպով կը յիշէ երեք մարդիկ, որոնք են. Նոյ, Դանիէլ եւ Յոր. ու զա-

նոնք արդարութիւն գործողներ կ'անուանէ (Եզեկ. ԺԴ. 14, 20) : Տարակոյս չկայ՝ որ այդ երեք մարդիկը մտաւորապէս եւ Ֆիզիքապէս ուրիշ շատ մը մարդոցմէ աւելի բարձր չէին : Ուրեմն ի՞նչ բանի շնորհիւ էր որ անոնք Նճովայի մասնաւոր հաճութեանն ու գովասանքին արժանացան : Ի հարկէ՝ շատերու կողմէ «նկարագրի զարգացում» կոչուած բանին շնորհիւր չէր այդ, ինչու որ ամէն մարդ անկատար ծնած է եւ ոչ մէկ մարդ կրնայ իր անձնական ջանքերով կատարելութեան հասնիլ :

«Նկեղեցական կազմակերպութիւն» կոչուածին մէջ՝ բազմաթիւ տարիներ ժողովուրդին այնպէս քարոզած են թէ՛ Աստուծոյ հաճութեան արժանանալու համար անհատ մը պարտի խիստ աստուածավախ ու հեզ երեւնալ եւ քաղցրալեզու ըլլալ, որպէս զի զինք տեսնողները ըսեն թէ «Ասիկա խիստ բարի մարդ մըն է. անտարակոյս նա երկինք երթալու համար կազմուպատրաստ վիճակի մը մէջ կը գտնուի» : Սակայն նոյն այդ աստուածավախ մարդը պիտի ջանայ ուրիշներու տհաճութիւն պատճառող ոեւէ բան չընել, եւ այդ պատճառաւ նա յաճախ պիտի գգուչանայ Աստուծոյ նպատակին մասին ճշմարտութիւնը խօսելէ՝ գիտնալով հանդերձ Անոր նպատակները :

Վերոյիշեալ երեք մարդիկը Աստուծոյ հաճութեան արժանացան՝ Անոր հանդէպ իրենց ցոյց տրուած հաւատարիմ ու անխարդախ նուիրմանը համար : Անկեղծօրէն Աստուծոյ նուիրում եւ Անոր հաւատարիմ եղող մարդիկ՝ բնաւ ժողովրդական չեն եղած՝ աշխարհի մէջ, եւ Տիրոջ հաճութիւնը ունեցող վերոյիշեալ անձինք աշխարհի մէջ ժողովրդական չէին : Տարիներով՝ Նոյ ժողովուրդին ճշմարտութիւնը քարոզեց Աստուծոյ գալիք բարկութեան մասին՝ որ ջրհեղեղով պիտի յայտնուէր եւ յայտնուեցաւ ալ, ու Նոյի անմիջական բնտանիքէն գատ ուրիշ ոչ ոք բարեացակամ վերաբերում

մը ցոյց տուաւ անոր հանդէպ : Ընդհակառակը՝ մարդիկ արհամարհեցին ու ծաղրեցին զինքը : Այդ բոլոր չարախօսութեանց ու հալածանաց մէջ՝ Նոյ Նճովայի հանդէպ ունեցած իր հաւատարմութիւնն ու անկեղծութիւնը պահեց, եւ բնաւ չչեղեցաւ արդարութեան շաւղէն :

Դանիէլ ամէն պարագայի տակ անխախտ կերպով Աստուծոյ հաւատարիմ մնաց : Ան բնաւ չվարանեցաւ թէ՛ իշխողներուն եւ թէ՛ ժողովուրդին խօսելու ճշմարտութիւնը, եւ մերժեց Սատանային կազմակերպութեան ոեւէ մէկ անհատին հետ իրաւախօսութեան (ֆալսիփրըմալալ) դալ : Այս առթիւ յիշուելու արժանի են նաեւ Դանիէլի երեք ընկերները : Անկասկած՝ անոնք Դանիէլի խորհուրդովը շարժեցան : Այդ մարդոց բոլորն ալ Բաբելոնի մէջ գերի տարուած էին : Բաբելոնի թագաւորը հրովարտակ դրկած էր ժողովուրդին՝ որ նուազներուն ձայնը լսածնուն պէս վար իյնային ու երկրպագէին անոնց արձանին՝ զոր ինք կառուցեր էր ի պատիւ Սատանային, եւ թէ՛ երկրպագութիւն չընողները ողջ ողջ պիտի այրուէին : Դանիէլի երեք ընկերները մերժեցին երկրպագութիւն ընել, ինչու որ ատիկա պիտի նշանակէր անհաւատարիմ ըլլալ Աստուծոյ : Այդ պատճառաւ անոնք կրակի հնոցին մէջ նետուեցան, բայց Աստուած ազատեց զանոնք :

Ներկայիս՝ երբ նուազախումբին կողմէ «Աստուած վրկէ թագաւորը» կամ ազգային նմանօրինակ եղանակ մը կը նուազուի՝ Աստուծոյ նուիրում եւ ըսողներէն շատեր անմիջապէս օտքի կ'ելլեն ուրիշներուն նման, այդպէս՝ մարդիկը փաղաքելու այդ ձեւին հաւանութիւն կուտան : Ասիկա՝ Սատանային կազմակերպութեան հաւանութիւն տալ կը նշանակէ : Այդպիսիներ ինքզինքնին կ'արդարացընեն՝ ըսելով, «Ես այդ բանը կ'ընեմ մտաւոր այն վերապահութեամբ թէ՛ հակառակ եմ ատոր» : Սակայն՝ ատիկա մարդոց հաճութիւնը ստանալու հա-

մար կատարուած իրաւախոհութիւն մըն է: Դանիէլը երեք ընկերները մերժեցին այդ բանը ընել, ու Աստուած անոնց բռնած ընթացքին հաճեցաւ ու զիրենք ազատեց-- Դան. Գ. 1--26:

Թագաւորը հրովարտակ մը հաներ էր թէ՛ մասնաւոր ժամանակի մը համար՝ պէտք չէր որ ունէ մէկը թագաւորէն դատ ուրիշ ունէ մէկու մը խնդրուածք ընէր: Ատոր նպատակն էր Դանիէլը բռնել Յնովայի աղօթած ատեն, որպէս զի անոր թշնամիները կարող ըլլային դայն մեռցնել՝ թագաւորին յայտարարած հրովարտակը ոտքի տակ առած ըլլալուն համար: Դանիէլ կրնար ըսել. «Նս գաղտնի պիտի աղօթեմ, որ թագաւորը չգիտնայ թէ Յնովային է որ կ'աղօթեմ»: Սակայն նա այդպէս չըբաւ: Ընդհակառակը՝ ծունկի եկաւ բաց պատուհանի մը առջեւ, ուրկէ ինք կրնար տեսնուիլ բոլոր մօտէն անցնողներէն, եւ Աստուծոյ աղօթեց: Նա մերժեց ուղղակի կամ անուղղակի կերպով իրաւախոհութեան դալ Սատանային կազմակերպութեան ունէ մէկ մասին հետ: Այդ յանցանքին համար նա առիւծներու գուբին մէջ նետուեցաւ, եւ եթէ Յնովան օգնութեան չհասնէր, անիկա անմիջապէս պիտի ոչնչացուէր: Բայց Աստուած հանդարտեցուց առիւծներուն բարկութիւնը ու Դանիէլը անվնաս ազատեց (Դան. 2. 1--23): Դանիէլ՝ իր ցոյց տուած հաւատարմութեանն ու բացարձակ նուիրմանը համար Աստուծոյ հաճութեան արժանացաւ ու ազատեցաւ:

Յոր ամբողջովին Աստուծոյ նուիրուած հարուստ մարդ մըն էր: Այդ բանը Սատանան խիստ զայրացուց: Սատանան ասպարէզ կանչեց Յնովան՝ որպէս զի իրեն թոյլ տար Յորը փորձելու, յայտարարելով թէ ինք կրնար Յորի հայհոյել տալ Աստուծոյ երեսին. թէ՛ մասնաւոր փորձութեանց տակ ոչ մէկ մարդ Աստուծոյ հանդէպ ունեցած իր հաւատարմութիւնը պիտի պահէր: Յնովան ընդու-

նեց մարտահրաւէրը եւ թոյլ տուաւ Սատանային որ Յորը ամենախիստ փորձութեանց ենթարկէ: Ս. Գրոց Յորի զբքին մէջ՝ այդ փորձութիւններն ու անոնց հետեւանքը մանրամասնօրէն պատմուած են: Ատոնց լիակատար բացատրութիւնը տրուած է անգլերէն Լայֆ կոչուած գրքին մէջ, զոր բարեկամարար կը յանձնարարենք որ մեր անգլիագէտ ազգայինները առաջին պատահութեամբ օրինակ մը ձեռք ձգեն մեզմէ ու կարդան: Յոր՝ իր վրայ բերուած բոլոր նեղութեանց ու չարչարանաց մէջ անխախտօրէն Աստուծոյ հաւատարիմ մնաց եւ պահեց իր ուղղամտութիւնը-- Յորայ Բ. 3:

Ահա այս պատճառներուն համար է որ Տէրը այդ մարդիկը հաճութեամբ կը յիշէ: Նա կ'ուզէ հասկցնել թէ՛ իրեն հանդէպ ունեցած ուղղամտութիւնին պահող այդ մարդիկը՝ այդ բանն ըրին՝ Սատանային կազմակերպութեան ունէ մէկ մասին հետ ընկերակցութիւն չընելով եւ ամէն պարագայի տակ Աստուծոյ հանդէպ անկեղծ եւ հաւատարիմ մնալով:

Շատ մը մարդիկ յայտարարած են թէ Աստուծոյ կ'երկրպագեն ու Յիսուսի քայլերուն կը հետեւին, եւ սակայն անոնք իրաւախոհական ուղի մը ձեռք առած են մարդոց հաճութիւնը շահելու համար, եւ այդ ընելով Յնովայի տհաճութեանը արժանացած են: Անոնք մարդոց նկատմամբ մեծ ըսքանչացում ցոյց կուտան եւ կուզեն որ ուրիշներն ալ իրենց վրայ սքանչանան: «Մարդոց մէջ բարձր եղածը Աստուծոյ առջեւ պիղծ է» (Ղուկ. ԺԶ. 15): Ամէն անոնք որ Աստուծոյ հաճութիւնը ստացած են ու դեռ կ'ստանան՝ մարդոց մեծարանք չեն տար, հապա զԱստուած կը մեծարեն եւ հաւատարմութեամբ Անոր կը ծառայեն: Երբայեցուց ժԱ. գլուխին մէջ այդպիսի մարդոց անուններու ցանկ մը տրուած է, որոնք աննպաստ պարագաներու տակ Աստուծոյ հաւատարիմ եղան, ու անկեղծ

և անխախտ մնալով իրենց ուղղամտութիւնը պահեցին: Աստուծոյ հաճութիւնը ստանալու միակ կերպն է՝ հաւատքով հարուստ ըլլալ և Աստուծոյ հաւատարիմ մնալ: Երբ. ԺԱ. 6:

Ս. Գիրքը բանալով ուշադրութեամբ կարդացէք Երբայեցոց ԺԱ. գլուխը, և հոն պիտի գրտնէք մարդոց ցանկ մը՝ որոնց հանդէպ Աստուած իր հաճութիւնը յայտնած էր, ինչու որ անոնց ամէնն ալ Աստուծոյ ու Անոր թաղաւորութեան հանդէպ անկեղծ ու հաւատարիմ դտնուած էին: Անոնք զիտէին թէ Աստուած խոստացած էր թաղաւորութիւն մը հաստատել օր մը, բայց չէին գիտեր թէ ատիկա ե՛րբ տեղի պիտի ունենար: Սակայն անոնք վճռած էին հաւատարիմ մնալ Աստուծոյ և գալիք թաղաւորութեան համաձայն ասրիլ: Անոնք մերժեցին Սատանային խոսքին հետ իրաւախոհութեան դալ, և այդպէս Աստուծոյ հանդէպ ունեցած իրենց ուղղամտութեանը մէջ անխախտ մնացին: «Անոնք ամէնն ալ հաւատքով մեռան՝ խոստմունքները չտած, հապա հեռուէն տեսան զանոնք ու ողջունեցին, և խոստովանեցան թէ իրենք օտարներ ու պանդուխտներ են Երկրի վրայ: ... Բայց հիմա լաւագոյն գաւառի մը (կառավարութեան մը) կը փափաքին, այսինքն Երկնաւորին. ուստի ամօթ չսեպեր Աստուած անոնց Աստուածը ըսուիլ, վասն զի ինք անոնց քաղաք մը պատրաստեց» (Երբայեցիս ԺԱ. 13, 16): Ուրիշ խօսքով՝ Աստուած իր թաղաւորութեան մէջ տեղ մը պատրաստած է այդ հաւատարիմ մարդոց համար: Ուրեմն ի՞նչ է այդ տեղը:

Այդ տեղը բուն Երկինքը չկրնար ըլլալ, ինչու որ Յիսուս Երկրի վրայ եղած ատեն այդ բոլոր մարդիկը՝ բացի Յովհաննէս Մկրտիչէն՝ մեռած էին և այն ալ բաւական ատենէ իվեր, և Յիսուս յայտարարեց թէ անոնց և ոչ մին Երկինքն էր կամ կրնար երբէք հոն ըլլալ: Յովհաննէս Մկրտիչ մար-

դարէներէն մին էր և բնաւ Երկինքի մէջ չկրնար ըլլալ, ինչպէս Յիսուս յայտարարեց (Յովհ. Գ. 13, Մատթ. ԺԱ. 11): Պողոս Երբայեցոց գիրքը գրեց, և Յիսուս Քրիստոսի հաւատարիմ առաքեալներէն մին ըլլալով՝ նա Անոր հետ Երկինքն է իրրեւ թաղաւորական ընտանիքին մէկ անդամը: Քրիստոս Յիսուսի խաչելութենէն ու յարութենէն վերջ Անոր քայլերուն հաւատարմօրէն հետեւողներն են որ կրնան երբէք Երկինք մէջ ըլլալ, ինչու որ Յիսուս առաջինն էր որ յարուցուեցաւ և ուրիշներուն համար ալ Երկինք երթալու ճամբան բացաւ: Ուրեմն՝ ակնարկելով Արէլէն սկսեալ մինչեւ վերջին հաւատարիմ մարդարէին՝ որոնց ամէնն ալ Քրիստոսի խաչելութենէն առաջ մեռան ու տակաւին մեռած են, Երբ. ԺԱ. 39, 40-ը կ'ըսէ. «Եւ ասոնք ամէնը հաւատքով վկայուած՝ խոստմունքը չտռին. քանզի Աստուած մեզի համար (Պողոսի և այն ուրիշներուն համար որ Երկինք պիտի երթան) աւելի աղէկ բան մը նախապատրաստեց, որպէս զի անոնք առանց մեզի կատարեալ չըլլան» (Տես անդլ. Ս. Գիրք): Ասիկա ցոյց կուտայ թէ՛ Քրիստոս Յիսուսի խաչելութենէն առաջ մեռած վերոյիշեալ մարդիկը կատարեալ ըլլալէ առաջ՝ Երկնային դասակարգը պէտք է ամբողջացած ըլլայ:

Վերը մէջ բերուած համարներուն խօսքերը որոշապէս ցոյց կուտան թէ՛ Աստուած այդ հաւատարիմ մարդոց համար տեղ մը պատրաստած է իր թաղաւորութեան մէջ, և քանի որ անոնք չեն կրնար Երկինք մէջ ըլլալ՝ պէտք է որ ուրիշ տեղ մ'ըլլան ու թաղաւորութեան մէջ գործածուին: Հետեւաբար՝ այդ հարցման ուղիղ պատասխանը այն է թէ՛ այդ հաւատարիմ մարդիկը Երկրի տեսանելի կառավարիչները պիտի ըլլան, որոնց միջոցաւ Տէր Յիսուս Քրիստոս, մեծ Թագաւորը, Երկրիս գործերը պիտի ղեկավարէ:

Ս. Գիրքը այդ հաւատարիմ մարդիկը յաճախ «Խորայելի հայրերը» կը կոչէ, ինչու որ անոնք հաւատարիմ ու ճշմարիտ եղած էին այն ուխտին՝ զոր Աստուած Խորայելացիներու հետ ըրած էր: Երբ Քրիստոսի թագաւորութիւնը սկսի գործել՝ ներկայ կառավարութեանց կործանումէն վերջ՝ ու այդ կառավարիչները իր թագաւորութիւնը ներկայացնեն՝ այն ժամանակ անոնք այլևս «Խորայելի հայրերը» պիտի չկոչուին: Այս կէտին շուրջ Աստուծոյ մարդարէն գրեց. «Քու հայրերուդ տեղ որդիներդ պիտի ըլլան. բոլոր երկրի մէջ իշխաններ պիտի ընես դանոնք» (Մաղմ. ՈՆ. 16): Անոնք Աստուծոյ որդիները պիտի ըլլան Քրիստոսի միջոցաւ, ինչու որ Եհովան է կեանք-պարգեւողը, եւ նա ատիկա կը պարգեւէ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: «Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտենական կեանք է մեր Տիրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով» (Հռովմ. 2. 23): Սաղմոսի վերոյիշեալ համարին մէջ գործածուած «իշխան» բառը կը նշանակէ կառավարիչ, կամ՝ կայսեր մը կամ թագաւորի մը տակ իշխող մէկը: Երկար ատենէ իվեր՝ Սատանան այս չար աշխարհի անտեսանելի տէրը կամ իշխանը եղած, ամբարշտութեամբ իշխած եւ երկրի վրայ ներկայացուցիչ ունեցած է անկատար ու ամբարիշտ մարդիկ: Այժմ Աստուած Քրիստոս Յիսուսը իր գահին վրայ դրած է, որ արդարութեամբ պիտի իշխէ: Երկրիս կառավարիչները, գիտակցօրէն թէ անգիտակցօրէն, դարերով Սատանային ազդեցութեան ու իշխանութեան տակ եղած՝ եւ այդ պատճառաւ՝ բռնապետական ու դաժան եղած են: Քրիստոսի, արդար թագաւորին, ձեռքին տակ եղած կառավարիչները ինչպէս պիտի իշխեն: Տէրը այդ հարցման պատասխան տուած է սա բառերով. «Ահա թագաւոր մը (Քրիստոս Յիսուս) արդարութեամբ պիտի թագաւորէ, ու իշխանները (կառավարիչները) իրաւունքով պիտի իշխեն» (Եսայեայ

ԼԲ. 1): Սատանային տիրապետութեան ատեն՝ աշխարհիս տեսանելի իշխանները կամ կառավարիչները յաճախ ամբարշտութիւն ընող եւ Աստուծոյ դէմ խօսող անզգամ ու անտակ մարդիկ եղած են, ատոնց նեցուկ ըլլալով «Քրիստոնեայ Աշխարհ»-ի կրօնական առաջնորդները կամ կղերները, որոնք յայտարարած են թէ՛ իրենք աստուածային էրաւասութեամբ է որ կ'իշխեն: Քրիստոսի արդարադատ թագաւորութեան ատեն՝ կարելի չէ որ այդպիսի կացութիւն մը տիրէ: Ինչու որ այն ատեն «անզգամին մէջմըն ալ աղնուարարոյ պիտի չըսուի, ու ադահին մէջմըն ալ առատաձեռն պիտի չըսուի»-- Եսայ. ԼԲ. 5:

ԿԱՏԱՐԵԱԼ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐ

Բարի մտքի ու անկեղծ սրտի տէր եղող բոլոր մարդիկ՝ սրտագին վախաբաժն են տեսնել կառավարութիւն մը՝ որ ուղղամիտ, ճշմարտասէր եւ անկեղծ մարդոց կողմէ ղեկավարուած ըլլայ. կառավարութիւն մը՝ որ ժողովուրդին ընդհանուր բարօրութեանը համար ի գործ դրուի եւ ոչ թէ որոշ դասակարգի մը մասնաւոր շահուն համար: Եթէ աշխարհի պատմութեան վրայ յետադարձ ակնարկ մը նետենք՝ պիտի չկրնանք գտնել գոյութիւն ունեցած մէկ հատ կառավարութիւն մը իսկ՝ որ արդարութեամբ ղեկավարուած եւ մարդկութեան ընդհանուր բարօրութեանը համար ի գործ դրուած ըլլայ: Պատճառը այն է թէ՛ այդ ժամանակաշրջանին՝ Սատանան եղած է այս աշխարհի աստուածը կամ աներեւոյթ իշխանը, որ ժողովուրդը ու իշխողները կուրցուցած է ճշմարտութեան հանդէպ, եւ իր երկրային ներկայացուցիչները մղած է խտութեամբ ու անգթութեամբ իշխելու (Բ. Կորնթ. Դ. 3, 4, Ա. Յովհ. Ե. 19, Յովհաննու ԺԲ. 31): Ուրեմն մարդիկ ինչպէս կրնան յուսալ այս երկրի վրայ ամենեւին արդարադատ

կառավարութիւն մը հաստատուած տեսնել՝ անկատար մարդոց իշխանութեան օրով: Անկասկած՝ աշխարհին կամ ժողովուրդին համար ոեւէ յոյս չկայ՝ երբ տակաւին ներկայ անարդար կառավարութեանց տակ է որ կը գտնուին: Ուստի ինչու ալլեւս այս անարդար կառավարութեանց նայիլ ազատութեան համար: Անոնք բոլորովին յուսազուրկ են եւ ժողովուրդին ոեւէ յոյս չեն կըրնար ընծայել:

Աշխարհի յոյսը՝ Քրիստոսի իշխանութեան տակ գրուած Աստուծոյ թագաւորութիւնն է, երբ երկրիս կառավարիչները պիտի ըլլան՝ վաղեմի հաւատարիմ ու արդար մարդիկը: Եհովա Աստուած արդէն իսկ իր արդարադատ Թագաւորը, Քրիստոս Յիսուս, իր զա՛հին վրայ գրած է: Սատանան ու անոր կազմակերպութիւնը այժմ պէտք է որ դուրս ելլեն: Սատանան կը մերժէ դուրս ելլել: Ուստի՝ նա իր ուժերը կ'առաջնորդէ դէպի Արմաղեոն, եւ Ամենակալ Աստուած ալ իր ուժերը կը հաւաքէ իր մեծ օրուան պատերազմին համար (Տես Յայտ. ԺԶ. 13--16 համարները, նաև անգլ. Լայք զբրքին հատոր Բ-ին 41--57 էջերը): Այդ պատերազմին մէջ՝ Սատանային անխիղճ, բռնապետական ու ամբարիշտ կազմակերպութիւնը կատարելապէս պիտի ոչնչացուի, որպէս զի՝ Քրիստոս Յիսուսի իշխանութեան տակ գրուած արդարադատ կառավարութեան հաստատմանը համար տեղ պատրաստուի:

Ս. Գրքին մէջ յիշուած այդ հաւատարիմ մարդիկը, Աբէլէն սկսեալ մինչև Յովհաննէս Մկրտիչ, Աստուած մահուընէ պիտի յարուցանէ եւ անոնց մարդկային կատարեալ կեանք պիտի շնորհէ (Տես Եբր. ԺԱ. գլուխը): Նա այդ բանը պիտի ընէ երկնային արքայական ընտանիքին ամբողջացումէն անմիջապէս վերջ. այսինքն՝ ամէն անոնց ընտրութեանէն վերջ՝ սրոնք Քրիստոս Յիսուսի հետ երկնից մէջ պիտի ըլլան: Յիսուսի խաչելութենէն

տոաջ մեռած այդ հաւատարիմ մարդիկը իրենց կարողութեանը ներածին չափ «բարին գործեցին» ու բոլորն ալ լաւ վկայութիւն ստացան, եւ Յիսուս անոնց մասին կ'ըսէ. «Բոլոր զերեզմաններու մէջ եղողները... անոնք որ բարի գործեր են՝ կենաց յարութեան համար» դուրս պիտի գան (Յովհ. Ե. 28, 29): Քիչ վերջ, կամ ներկայ սերունդին օրով, այդ հաւատարիմ մարդիկը դուրս պիտի բերուին եւ անոնց պիտի արուի երկրիս վրայ կատարեալ կեանք, ու ձեռք պիտի առնեն այն ատենուան կառավարութեան մէջ իրենց համար սահմանուած գործերը, եւ այդպէս երկրիս բոլոր ժողովուրդներուն տեսանելի կառավարիչները պիտի ըլլան: Իբրև Աստուծոյ արդարադատ կազմակերպութեան անդամներ՝ անոնք ժողովուրդը պիտի յորդարեն, զաստիարակեն ու առաջնորդեն իրենց երթալիք ուղիղ ճամբուն մէջ, որպէս զի ժողովուրդը կարենայ ստանալ այն օրհնութիւնները զորս Աստուած պատրաստած է ամէն անոնց համար՝ սրոնք իրեն ու իր արդարադատ կառավարութեան հաւատարիմ պիտի ըլլան: Անյ ժամանակ ժողովուրդը արդարութիւն պիտի սորվի եւ ուղիղը ի գործ պիտի դնէ:

Այժմ երկրիս վրայ եղած՝ Եհովայի վկաներուն առանձնաշնորհն ու պարտականութիւնն է այս մեծ ճշմարտութիւնները ժողովուրդին յայտարարել, ինչու որ ատոնք իրականանալու վրայ են եւ Տէրը մտադրած է ատոնց մասին ծանօթութիւն տալ: Եհովան՝ Քրիստոս Յիսուսի հետեւող իր վկաներուն ներկայիս կ'ըսէ. «Առաջուան բաները ահա եղան, ու նորերը ես կը յայտնեմ. անոնք զիս չեղած ձեզի կ'իմացնեմ» (Եսայ. ԽԲ. 9): Եհովայի այդ վկաները վստահ են թէ նոր ու արդարադատ կառավարութիւնը ալ մօտեցած է, եւ թէ՛ որպէս կատարեալ ու տեսանելի կառավարիչներ յիշուած այդ մարդիկը՝ իրիս կարճ ժամանակէն երկրիս վրայ պիտի ըլլան զարձեալ. եւ Աստուած պատ-

ւէր տուած է որ այս ճշմարտութիւնները ժողովուրդին քարոզուին, որպէս զի անոնք այդ նոր ու արդարադատ իշխաններուն համար պատրաստութիւն տեսնեն: Ուստի Նհովան Իր հաւատարիմ վկաներուն կը պատուիրէ՝ «ժողովուրդներուն դրօշակ վերցնել» որպէս զի անոնք կարենան ուղիղ ճամբէն քալել:-- Եսայ. ԿԲ. 10:

Այս պատուէրին հնազանդելով՝ Նհովայի վկաները պատրաստած ու հրատարակած են սոյն մեծ ճշմարտութիւնները յայտարարող կարգ մը գերբեր, Ս. Գրքէն փաստեր ներկայացնելով եւ ցոյց տալով թէ՛ այդ փաստացի համարները Ս. Գրոց ո՛ր մասին մէջ կարելի է գտնել. եւ այդ բանը կատարուած է անոր համար որ մարդիկ ծանօթութիւն ստանան եւ այժմ մօտեցող Թագաւորութեան օրհնութիւններն ստանալու պատշաճ փիճակի մէջ ըլլան: Այդ գերբերն են՝ Աստուծոյ Քնարը; Ագատութիւն, Ստեղծագործութիւն, Կառավարութիւն, Հաշտութիւն, Կեանք, Լոյս (Ս. եւ Բ. հատորներ), եւ Չատագովութիւն, որոնք այս խնդիրները մանրամասնօրէն կը բացատրեն: Այս գերբերը ժողովուրդին կը ներկայացուին ոչ թէ շահախնդրական նպատակով, հապա անոր համար որ ներկայիս իրականացման մէջ եղող մեծ անցքերուն մասին մարդիկ տեղեկութիւն ստանան: Այս գերբերը ժողովուրդին կը հրամցուին հրատարակութեան ծախքէն ալ աւելի վար դնով մը. բայց ժողովուրդին համար աւելի լաւ է՝ որ սոյն կենսական ծանօթութիւնը ձեռք բերելու համար փոքրիկ զոհողութիւն մը կամ ջանք մ'ընէ: Ներկայ ժամանակները տաղահասակն են, եւ ի հարկէ անդեղէնի համար դրամ պէտք է, բայց անհատի մը համար լաւագոյն է ժուճ մը կերակուրէ զրկուիլ կամ քանի մը ժամ անօթի կենալ, ու այդպէս ձեռք բերել մտքի սրնունդ մը՝ որ յաւիտենական կենաց ճամբան ցոյց պիտի տայ իրեն: Նհովա Աստուած արդարատէրնե-

րուն աղատութեանն ու օրհնութեանը համար ամէն բան պատրաստած է, եւ ա՛լ հասած է ժամանակը որ անոնք սկսին այդ բանին տեղեկանալ:

Ուստի համառօտաբար, Աստուծոյ Թագաւորութիւնը սա է. Գրիստոս Յիսուս եւ Անոր հաւատարիմ հետեւորդները կը կազմեն իշխող անտեսանելի կառավարութիւնը. Տիրոջ խաչելութենէն առաջ հաւատքով մեռած հաւատարիմ մարդիկը իբրեւ կատարեալ մարդիկ պիտի յարուցուին ու երկրիս վրայ տեսանելի իշխաններ պիտի կարգուին. եւ այսպէս առաջ պիտի դայ այն ամբողջական դործոն կազմակերպութիւնը՝ որ ի դործ պիտի դուրս երկրիս ժողովուրդներուն օգտին ու Նհովա Աստուծոյ փառքին ու պատուին համար: Այդ կառավարութիւնը պիտի բերէ վաղուց իվեր ժողովուրդին մեծապէս փափաքած հանդստութիւնն ու օրհնութիւնները:

Այն բոլոր մարդիկը որ ճշմարտութիւնն ու արդարութիւնը կը սիրեն եւ կը փափաքին երկրիս վրայ մարդոց մէջ արդարութիւն տեսնել՝ թող Տէր Աստուծոյ դառնան ու ներկայիս Անոր կողմը կանգնին, որպէս զի կարող ըլլան յաւիտենական կենաց ճամբան սորվիլ: «Այս է յաւիտենական կենաքը, որ ճանչնան քեզ մի միայն ճշմարիտ Աստուածք, ու Յիսուս Գրիստոսը զոր դուն զրկեցիր» (Յովհ. Ժէ. 3): Քաջասիրտ եղէք ու վեր բարձրացուցէք զլուսնիդ, ինչու որ ա՛լ մօտեցած է աղատութիւնը: Աշխարհի միակ յոյսը Աստուծոյ Թագաւորութիւնն է: Հիմակուրնէ սկսեալ Անկէ՛ սորվեցէք ու Անոր անունը մեծարեցէք, եւ թող ձեր յոյսը անխախտ ու ամուր ըլլայ:

Դուք պիտի ըմբռնէք այն իրողութիւնը՝ թէ այս պատգամը բրորականտա չէ: Չեզի սեւէ օգուտ մը պիտի չունենայ երկրային կազմակերպութեան մը միանալը: Այս տեղեկութիւնները անոր համար

կուտանք՝ որովհետեւ Աստուած այդպէս պատուիրած է-- Մատթ. ԻԴ. 14:

Եհովա Աստուած՝ Իր բոլոր սուրբ մարդարէններուն գրեւ տուաւ թագաւորութեան միջոցաւ ժողովուրդին ընծայուելիք օրհնութեանց մասին: Յիսուս երկրիս վրայ եղած ատեն՝ դալիք այս բոլոր պատուական բաներուն մասին տեղեկութիւն ունէր. ուստի նա Իր աշակերտներուն յորդորեց աղօթել՝ «Քու թագաւորութիւնդ գայ. քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ»: Ու այդպէս ալ պիտի ըլլայ: Այն արդարութիւնը որ երկինց մէջ կը տիրէ՝ քիչ ատենէն երկրի վրայ ալ պիտի տիրէ, ու ամէն բռնաճնշում յաւիտեան վերջ պիտի գտնէ: Աստուծոյ մարդարէն այս մասին գրեց. «Ժողովուրդին աղքատներուն իրաւունք պիտի ընէ, տնանկին դաւակները պիտի աղատէ, ու բռնաւորը պիտի ջարդէ: ... Հնձուած խոտի վրայ իջած անձրեւի պէս պիտի իջնէ, տարափներու պէս՝ որոնք երկիրը կը թրջեն: Անոր օրերուն մէջ արգարը պիտի ծաղկի. ու շատ խաղաղութիւն պիտի ըլլայ, մինչեւ որ ա՛լ լուսին չըլլայ: Ու ծովէն մինչեւ ծովը պիտի տիրէ անիկա, ու դետէն մինչեւ երկրի ծայրերը» (Մաղմ. 2Բ. 4, 6-8): «Արդարեւ իր փրկութիւնը մօտ է իրմէ վախճողներուն, որպէս զի մեր երկրին մէջ փառք բնակի: Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը իրարու պատահեցան, արդարութիւնը եւ խաղաղութիւնը իրար համբուրեցին: Ճշմարտութիւնը երկրէ պիտի բուսնի, ու արդարութիւնը երկինքէն վար պիտի նայի: Նաեւ Տէրը բարութիւն պիտի տայ, ու մեր երկիրը՝ իր պտուղը պիտի տայ: Արդարութիւնը անոր առջեւէն պիտի երթայ, ու մեզ իր քայլերուն մէջ պիտի դնէ» (Մաղմ. 2Ե. 9-15): Հետեւաբար՝ թող ճշմարտութեան այս պատգամը հռչակուի ազգերուն մէջ. «Տէրը կը թագաւորէ. աշխարհ ալ հաստատուած է որպէս զի չասանի. անիկա պիտի

դատէ ժողովուրդները ուղղութիւնով»-- Սաղմոսաց 72. 10:

ԱՍՏՈՒԾՈՅ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԶԵՐ ՄԷՋ

Ս. ԳՐՈՑ մէջ քարոզուած բոլոր վարդապետութիւններուն մէջէն՝ Եհովան աւելի մեծ կարեւորութիւն կ'ընծայէ Իր թագաւորութեան վարդապետութեանը: Անիկա Յիսուս աշխարհ ղրկեց՝ որպէս զի Իր թագաւորութեան մասին վկայութիւն տայ: Անապատին մէջ փորձուելէն անմիջապէս վերջ՝ Յիսուս Իր երկրային դորձին սկսաւ՝ ըսելով՝ «Երկինքի թագաւորութիւնը մօտեցած է»: Ան՝ երկինքի թագաւորութիւնը կոչուած է անոր համար որ իշխանութիւնը երկինքէն է որ կուգայ: Ան Աստուծոյ թագաւորութիւնը կոչուած է՝ ինչու որ Աստուած է Յաւիտեանական մեծ Թագաւորը՝ որ անորմասին կարգադրութիւն ըրած է: Ան Քրիստոսի թագաւորութիւնը կոչուած է, անոր համար որ Աստուծոյ Օծեալը, Քրիստոս, անոր զլխաւոր պաշտօնեան է: Բայց ո՞ր է այդ թագաւորութիւնը:

Այդ հարցման սխալ պատասխանը մարդոց մտքին մէջ մեծ շփոթութիւն առաջ բերած է: Բոլոր քրիստոնեաներն ալ պիտի վկայեն այն իրողութեանը թէ՛ այդ հարցման գրեթէ սապէս պատասխանուած է. 'Երբ մէկը քրիստոնեայ կ'ըլլայ՝ թագաւորութիւնը իր սրտին մէջ կը հաստատուի. ու երբ ամէնն ալ Քրիստոսի բերուին՝ այն ատեն թագաւորութիւնը լիովին հաստատուած պիտի ըլլայ, ինչու որ Քրիստոս ըսաւ, «Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսիդին է»: Այս պատճառաւ անոնք պնդած են թէ՛՝ 'պետք է որ եկեղեցին աշխարհը դարձի բերէ՛՝ որպէս զի Աստուծոյ թագաւորութիւնը կարենայ դալ՝:

Այդ պատասխանը բացարձակապէս սխալ է, եւ ցոյց կուտայ թէ այդպէս պատասխանողները Ս. Գրոց մասին բոլորովին տգէտ են:

Ղուկասու ժէ. 21-ին կապակցութիւնը կարգալով՝ պիտի կրնանք նկատել որ Յիսուս փարիսեցիներուն էր որ կը խօսէր, որոնք Յիսուսի եկեր ու Անկէ ուզեր էին գիտնալ թէ ե՛րբ պիտի դար թագաւորութիւնը: Նա անոնց էր որ ըսաւ, «Թագաւորութիւնը ձեր ներսիդին է»: Մենք դիտենք որ Աստուած Իր թշնամիներուն սրտին մէջ չէ որ պիտի հաստատէ Իր թագաւորութիւնը: Փարիսեցիները այնպէս էին յայտարարեր թէ իրենք զԱստուած կը ներկայացնեն, եւ իրենք այդ օրուան կղերներն էին, սակայն Յիսուս շարունակաբար ըսաւ անոնց թէ իրենք կեղծաւորներ ու Սատանայի որդիներ էին: Եթէ ուշադրութեամբ կարդանք Մատթէոսի Խ. գլուխը, պիտի տեսնենք թէ Յիսուս որքան խիստ կերպով կը դատապարտէ փարիսեցիները: Եւ յետոյ նկատի առնենք Յովհ. Ը. 42-44 համարներուն մէջ գտնուած խօսքերը՝ որոնցմով Նա ըսաւ անոնց թէ իրենք Սատանային որդիներն էին: Ուրեմն՝ սխալմունք մը գոյութիւն ունեցած ըլլալու էր «Քրիստոնեայ Աշխարհ»-ի ուսուցիչներուն կամ անոնց հետեւորդներուն տուած այն պատասխանին մէջ թէ՛ թագաւորութիւնը մարդոց սրտին մէջ է որ կը հաստատուի:

Այժմ եթէ քննենք Ս. Գիրքը, պիտի տեսնենք որ Ղուկասու ժէ. 20, 21-րդ համարները սապէս կը կարդացուին լուսանցքին մէջ. «Աստուծոյ թագաւորութիւնը ձեր մէջ է»: Ս. Գրոց Տայըկլաք անունով անգլերէն թարգմանութիւնն ալ այդ բաները կը գործածէ: Յիսուսի խօսքը պարզապէս սա կը նշանակէ. Անպատին մէջ Յիսուսի փորձուելէն քիչ վերջ՝ Եհովա Անոր հետ ուխտ մ'ըրաւ թագաւորութիւնը Անոր տալու, եւ Նա Յիսուսը օձեց ըլլալու համար այն Թագաւորը՝ որուն իրաւունքն

է աշխարհի իշխել Աստուծոյ սահմանած ժամանակին: Այդ ատենէն սկսեալ Յիսուս կրնար ըսել Իր շուրջը գտնուողներուն, 'Թագաւորութիւնը մօտեցած է', այն իմաստով որ Յիսուս Ինք օձեալ Թագաւորը կամ Իշխանն էր եւ այդ պարագային Ինք երկրիս վրայ ժողովուրդին մէջ էր: Երբ փարիսեցիները եկեր էին զԱնիկա Իր խօսքերովը բռնելու մտադրութեամբ՝ Նա հապէս ըսաւ անոնց. 'Թագաւորութիւնը ձեր մէջ կամ մէջտեղն է, ինչու որ ահա Ես Հոս եմ, ձեր մէջ կը կանգնիմ, եւ ես այն Մէկն եմ զոր Եհովան թագաւորութեան համար օձած է': Փարիսեցիները հասկցան Յիսուսի խօսքերուն իմաստը, ինչու որ անոնք յետոյ զԱնիկա իբր խոսվարար մը ամբաստանեցին՝ Ինքզինք Թագաւոր յայտարարած ըլլալուն համար:

Փարիսեցիներուն համանմանները կը գտնենք ներկայ «Քրիստոնեայ Աշխարհ»-ի առաջնորդներուն մէջ: Ասոնք Յիսուսի խօսքերուն ո՛չ միայն ծուռ մեկնաբանութիւն տուած են՝ հասլա նաեւ իրենց ուսերուն վրայ առած են աշխարհը դարձի բերելու բեռը, ըսելով թէ Աստուծոյ թագաւորութիւնը երբէք չկրնար դալ մինչեւ որ յարանուանական եկեղեցիները ժողովուրդը եկեղեցիին մէջ չբերեն եւ երկիրը չզարգարեն մարդոց բարոյական իրազօրծութիւններովը, թէ՛ ահա ատկէ վերջն է որ Քրիստոս պիտի դայ ու երկրին այցելէ: Իրենց եզրակացութիւնները դարձեալ հիմնովին սխալ ու խիստ մոլորեցուցիչ են: Քրիստոս Յիսուս արդէ՛ն իսկ եկած ու թագաւորութիւնը կրնանք ըսել՝ անցնելու յայն այս ճշմարտութիւնը կրնանք ըսել՝ անցեալ յեւէ ժամանակէ աւելի զօրաւոր չեչտով մը:

Յիսուս՝ փարիսեցիներուն խօսելէն քիչ վերջ երկինք համբարձաւ: Այդ օրէն իվեր՝ Անոր հաւատարիմ հետեւորդները Իր վերադարձին սպասած են: 1914-ին վերջ գտաւ, սպասումի շրջանը, եւ այդ ատեն Աստուած Յիսուսը, Իր օձեալ Թագաւոր

րը, Իր գահին վրայ դրաւ: Ս. Գիրքը այդ բանին որպէս փաստ կը ներկայացնէ համաշխարհային պատերազմը եւ ատոր անմիջապէս յաջորդող դէպքերը: 1918-ին՝ Յիսուս Քրիստոս ներկայ եղած ըլլալով՝ սկսաւ Իր շուրջը համախմբել ամբողջովին Աստուծոյ ու Անոր թագաւորութեան նուիրուած Իր ժողովուրդը, եւ այժմ յառաջ կը տարուի Իրեն հետեւորդութիւն դաւանողներուն դատաստանը:

Եւոզայի օծեալ Թագաւորին յաջորդ մեծ գործը պիտի ըլլայ՝ Սատանային կազմակերպութիւնը ոչնչացնել Արմաղեղոնի պատերազմին մէջ՝ որ խիստ մօտեցած է հետեւաբար՝ երկրիս ժողովուրդներուն շարունակաբար պէտք է յայտարարուի սա ճշմարտութիւնը, իր մեծ կարեւորութեանը համար, թէ Աստուծոյ թագաւորութիւնը ձեր մէջ է ներկայիս: Ահա այդ պատճառաւ է որ ամէն օր, մասնաւորապէս կիրակի օրեր, այրելու ու կիներ դռնէ դուռ կը շրջին, այս պատգամը ժողովուրդին ներկայացնելով եւ Ս. Գիրքը բացատրող գրքերու միջոցաւ անոնց ուշադրութեան յանձնելով Ս. Գրոց փաստերը: Անցեալին մէջ երբէք այնքան կարեւոր չէր թագաւորութեան բարի լուրերը քարոզել, որքան որ է ճիշդ ներկայիս, ու երբ այդ գործը լրանայ՝ ատկէ անմիջապէս վերջ պիտի գայ Արմաղեղոնի պատերազմը:

Յիսուս փարիսեցիներուն խօսած ատենը ըսաւ. «Օրէնքը ու մարգարէները մինչեւ Յովհաննէս էին. անկէ ետեւ Աստուծոյ թագաւորութիւնը կը քարոզուի» (Ղուկ. ԺԶ. 16): Յովհաննէս Քրիստոսի առջեւն զնացողն էր: Բոլոր մարգարէներն ալ թագաւորութեան մասին նախաձայներ էին, բայց Քրիստոս էր որ սկսաւ թագաւորութիւնը քարոզել եւ ըսել թէ ան մօտեցած էր: Քրիստոս Յիսուսի աշակերտներն ալ շարունակեցին թագաւորութեան մասին քարոզել, սակայն անոնց մահէն ընչ վերջ ուրիշ բաներ սկսան քարոզուիլ: 1874-ի ժամանակ-

ները՝ Տէրը սկսաւ Իր ժողովուրդին ուշադրութեան յանձնել այն հիմնական ճշմարտութիւնները՝ որոնք մթութեան մէջ պահուած էին մարդոց քարոզած բազմաթիւ մոլորութիւններուն պատճառաւ: Այդ ժամանակէն մինչեւ 1914՝ ճշմարիտ քրիստոնեաներու գործը պատկերացուած էր Յովհաննէս Մկրտչին ըրածովը: 1914-ին Տէր Յիսուս երկրորդ անգամ եկաւ, եւ 1918-ին Նա սկսաւ Իր հաւատարիմ հետեւորդներն ի մի համախմբել: Ահա այդ ժամանակ էր որ Նա պատուիրեց, եւ որուն պէտք է հնազանդիլ, այս բարի լուրերը վկայութեան համար երկրիս ազգերուն քարոզել, եւ ատոր համար է որ այդ վկայութեան գործը կը կատարուի ներկայիս:

1918-էն առաջ՝ Յովհաննէս Մկրտիչի նման՝ Աստուծոյ ժողովուրդը կը յայտարարէր թէ Աստուծոյ թագաւորութիւնը պիտի հաստատուի: 1918-ին եւ անկէ յետոյ՝ Աստուծոյ ժողովուրդը սեւէ ժամանակէ աւելի տեսաւ թէ՛ Թագաւորը Իր գահին վրայ հաստատուած եւ թագաւորութիւնը սկսած էր, հետեւաբար՝ Անոր պատուէրին հնազանդելով՝ պէտք էր որ ժողովուրդին վկայէին թէ թագաւորութիւնը այլեւս իրենց մէջ էր:

Աստուծոյ թագաւորութեան թշնամիները կ'ուզեն ժողովուրդը ազէտ պահել այն իրողութեան մասին թէ՛ թագաւորութիւնը եկած է. եւ այդ պատճառաւ՝ իրենք այն աղաղակը կը բարձրացունեն թէ՛ Տիրոջ ժրջան վկաները բրորականտայի գործ է որ առաջ կը տանին: Ատիկա ճշմարիտ չէ, ինչու որ Աստուծոյ թագաւորութեան նկատմամբ բրորականտայի գործ չկրնար ըլլալ: «Բրորականտա» բառը կը նշանակէ՝ տեսութիւն մը տարածել ուրիշներ անոր միացնելու նպատակաւ: Թագաւորութեան աւետիսը պարզապէս իրողութեան մը ծանուցումն է՝ որ կը կատարուի ժողովուրդը տեղեակ պահելու համար: Ատիկա Աստուծոյ պատ-

դամն է ո՛չ թէ մարդոց: Աստուած բրորականտայի գործ չընէր:

Ոմանք այն խորհուրդը յղացած են թէ՛ իրենց պարտականութիւնն է ներկայիս ժողովուրդին ներկայացուած պատգամը գրաքննութեան ենթարկել եւ անկէ դուրս ձգել այլ եւ այլ կէտեր, այն պատճառաբանութեամբ թէ՛ ատոնք կրնան հակաճառութիւն առաջ բերել: Աստուծոյ ճշմարտութեան խօսքը հակաճառական չկրնար ըլլալ, ինչու որ ան Եհովայէն է որ կը բղխի: Մենք երբէք չենք ջանար մէկը դաւանափոխ ընել կամ կազմակերպութեան մը միացնել: Պատգամը կը յայտարարենք միայն այն նպատակաւ՝ որ ժողովուրդը իրողութիւններուն մասին ծանօթութիւն ստանայ: Տէրը պատւիրած է որ այս բարի լուրը բոլոր ազգերուն քարոզուի վկայութեան համար: Լսել չուզողները լսելու պարտաւոր չեն: Սակայն ոչ ոք իշխանութիւն ունի Աստուծոյ Ոսօքը գրաքննութեան ենթարկելու եւ այդպէս՝ լսելու փափաք ունեցողներուն արգելք հանդիսանալու: Թող ժողովուրդը նախ լսէ՛ ու յետոյ ի՛նք վճռէ թէ ի՛նչ ուղիի է որ պիտի հետեւի: Եթէ պատգամը ճշմարիտ է՝ անոր քարոզութիւնը ոչ ոք կրնայ արգելել, եւ ամէն անոնք որ կը ջանան անոր արգելք հանդիսանալ՝ ինքզինքնին ծանր պատասխանատուութեան տակ կը դնեն:

Մեր ներկայ ժամանակուան ակնարկելով՝ Աստուած Իր մարգարէին միջոցաւ կ'ըսէ Իր հաւատարիմ վկաներուն. «Ելիք, լուսաւորուէ՛ք քանզի քու լոյսդ եկաւ, ու Տիրոջը փառքը քու վրադ ծագեցաւ: Վասն զի ահա երկիրը խաւար ու ազգերը մոռախուղ պիտի ծածկէ. բայց քու վրադ Տէրը պիտի ծագի, եւ անոր փառքը քու վրադ պիտի երենայ» (Եսայ. Կ. 1, 2): Ասիկա կը նշանակէ թէ թագաւորութիւնը եկած է, եւ անոնք որ զայն կը տեսնեն՝ պէտք է որ ելլեն ու ժողովուրդին աղաղակեն. «Քու Աստուածդ կը թագաւորէ»:

Բոլորն ալ կը տեսնեն թէ՛ ճիշդ այս պահուստաւար կայ երկրիս մէջ եւ ժողովուրդներուն վրայ ալ թանձր մթութիւն՝ Աստուծոյ Ոսօքին նկատմամբ, եւ բովանդակ աշխարհը իսկ եւ իսկ մահւան շուքին մէջ կը գտնուի խիստ մօտալուտ Արմագեդոնին պատճառաւ: Աստուծոյ պատուէրն այն է՝ որ Իր վկաններուն կողմէ թէ՛ իշխողներուն եւ թէ՛ ժողովուրդին ազդարարութիւն տրուի՝ մասնաւորապէս «Քրիստոնեայ Աշխարհ»-ի եւ գլխաւորաբար Սատանային ամբողջ կազմակերպութեան կործանման մասին, որպէս զի սրտով անկեղծ ու բարեացակամ մարդիկ, եթէ ուզեն, Տէր Աստուծոյ կողմը անցնին եւ Անոր թագաւորութեան հպատակութիւն յայտնեն: Մարդոց ահա այդ դասակարգն է որ՝ Արմագեդոնի պատերազմին ամենասաստիկ մասին մէջջն անցնելով պիտի ազատի: Տէրը Իր Սոփոնիա մարդարէին միջոցաւ կ'ըսէ այդ մարդոց. «Իե՛տ Տիրոջը սաստիկ բարկութիւնը ձեր վրայ չեկած ... արդարութիւն փնտոնցէք, խանարհութիւն փնտոնցէք, թերեւ Տիրոջը բարկութեան օրը պահուիք»-- Սով. Բ. 2, 3:

Աստուած Իր հաւատարիմ վկաններուն վրայ պատասխանատուութիւն կը դնէ թէ՛ իշխողներուն եւ թէ՛ ժողովուրդին յայտարարելու այս պատգամը, եւ անոնք Իրեն առջեւ մեղապարտ պիտի ըլլան եթէ չյայտարարեն զայն: Երբ Անոր վկաները պատգամը յայտարարեն՝ իրենց վրայէն կը վերնայ պատասխանատուութիւնը: Ուստի բոլորին ալ պէտք է յայտնի ըլլայ թէ՛ այն մարդը կամ մարդոց խումբը որ կը ջանայ Տիրոջ այդ պատգամը կրճատել կամ գրաքննութեան ենթարկել՝ ինքզինք Տիրոջ առջեւ ծանրակշիւ կացութեան մը մէջ կը դնէ:

Փարիսեցիական իշխանները ջանացին Աստուծոյ վկաններն արգելել թագաւորութիւնը յայտարարելէն: Անոնց համանմանները ներկայիս կը ջա-

նան նոյն բանը ընել: Սակայն Տէրը կը յայտարարէ թէ այս պատգամը վկայութեան համար ազդերուն պէտք է քարոզուի, հետեւաբար քարոզելու է զայն: Այժմ Քրիստոս, Յիսուս, աշխարհի օրինաւոր Թագաւորը, սկսած է թագաւորել, եւ ժամանակը հասած է բոլոր կարգապահ մարդոց ցոյց տալու՝ այդ թագաւորութեան օրհնութիւններուն մէջ մըտնելու ճամբան: Մարդիկ երբէք չեն կրնար ուրիշ սեւէ կերպով ազատութիւն ու օրհնութիւն ստանալ: Ուստի Աստուած Իր օծեալ վկաներուն սապէս կը պատուիրէ. «Անցէք, անցէք դռներէն, ժողովուրդին ճամբայ պատրաստեցէք. շիտկեցէք, շիտկեցէք շաւղիները, քարերը անկէ ժողովեցէք. ժողովուրդին դրօշակ վերցուցէք»-- Եսայ. ԿԲ. 10:

Այս համարին մէջ յիշուած «դռները» կը ներկայացնեն թագաւորութեան մուտքը: «Դռներէն անցնել»-ը կը պատկերացնէ՝ Քրիստոս Յիսուսի հաւատարիմ հետեւորդներուն երեսներն ու սրտերը ամբողջովին Թագաւորին կողմը դարձուիլը, եւ անոնք այդ բանը կ'ընեն իրենց հետապնդած զործելակերպովը, ու այդպէս կը վկայեն ժողովուրդին թէ թագաւորութիւնը եկած է: «Ժողովուրդին ճամբայ պատրաստել»-ը կը նշանակէ ժողովուրդին օգնել՝ թագաւորութեան մասին տեղեկութիւն ստանալու: Եթէ դուք գիտնայիք՝ թէ այդ մասին տեղեկութիւն ունեցողներուն եւ ըստ այնմ ապրողներուն համար խիստ պատուական բան մը վերապահուած էր, ձեր բարեսրտութիւնը ձեզ պիտի մղէր այդ բանը ժողովուրդին յայտնելու: Քրիստոս Յիսուսի հետեւորդները գիտեն թէ ժողովուրդին մեծապէս փափաքած բանը, այն՝ որուն համար անոնք այնքան ատեն սպասած են, ներկայիս խիստ մօտեցած է, եւ թէ՛ ան իրենց երեւակայածէն ու խորհածէն շատ աւելի մեծ օրհնութիւններ պիտի բերէ: Ատիկա է՝ թագաւորութիւնը եւ այն օրհնութիւնները զորս ան պիտի ընծայէ բոլորին: Ուս-

տի բոլոր անոնք որ զԱստուած եւ իրենց նմանները կը սիրեն՝ թագաւորութեան բարի լուրը ուրիշներուն քարոզելու կը բաղձան: Ատիկա ո՛չ բոքրականնա եւ ոչ ալ կաղմակերպութիւն մը առաջ բերելու ջանք է: Աստուծոյ մարգարէին ըսած «քարերը ժողովել»-ը կը նշանակէ ժողովուրդին օգնել՝ որ իրենց մտքերէն դուրս հանեն այն շատ մը մտլորութիւնները՝ որոնք ճշմարտութեան տիրանալու ջանքին մէջ դայթակղութիւններ եղած են իրենց: Ժողովուրդին ճշմարտութիւնը քարոզուած ատեն՝ անհրաժեշտ է որ անոնց խօսուի «Քրիստոսնայ Աշխարհ»-ի առաջնորդներուն ստրվեցուցած այն մտլորութիւններուն մասին՝ որոնք շատերը դայթակղեցուցած են: Մենք այս բաները չենք խօսիր սեւէ մէկուն վնաս պատճառելու նպատակաւ, հապա ա-նոր համար որ պէտք է ժողովուրդը կուրուսթեան մէջ պահող մոլորութիւններն այդպէս մէջտեղէն վերցնել, եւ մենք ատիկա կը կատարենք Աստուծոյ պատուէրին հնազանդելով: Ինչպէս որ Տէրը պատւիրած է՝ «Ժողովուրդներուն դրօշակ վերցնել»-ը կը նշանակէ մարդոց մատնանշել փրկութեան եւ ազատութեան միակ ճամբան: Աստուծոյ դրօշակը ուղիղ դրօշակն է, եւ մարդոց ցոյց կուտայ կենաց ու մշտնջենական երջանկութեան ճամբան: Բոլորն ալ փափաքելու են անոր մասին տեղեկութիւն ունենալու:

Ուստի ամէն անոնք՝ որ կը լսեն այն աւետիսը թէ՛ երկնից թագաւորութիւնը ձեր մէջն է, ու Քրիստոս սկսած է թագաւորել, թող ձեռք առնեն այդ ուրախ լուրը եւ զայն ուրիշներուն յայտարարելով՝ բաժին ունենան Եհովայի անունը ջատագովելու վսեմ զօրծին մէջ:

## ԱԶԱՏՈՒԹՒՒՆ

Այսպիսի ազգերը, եւ մասնաւորապէս բազմաւարձար հայ ազգը, ներկայիս ո՛րքան մեծ պէտքը կ'զգան ճշմարիտ ազատութեան: Բայց ե՞րբ եւ ի՞նչպէս պիտի դայ տառապող ժողովուրդներուն ազատագրութիւնը:

Ողորդութիւն եւ ազատութիւն ձեռք ձգելու համար՝ մարդոց ու կառավարութեանց փորձած դիւանդիտական, բարեկարգչական, դրամական, շրճական, դիտական, եւայլն հնարքներուն ու վարչաձեւերուն ունայնութիւնն ու անդօրութիւնը յայտնի են ամենուս:

Տնտեսական տարնասը կը սաստկանայ. ազգերը յիմարար կը վազեն դէպի իրենց վերջնական ոչնչացումը, Արմազիդոնի պատերազմը: Այս պատերազմի տեւողութեան անչափ մարդիկ պիտի մեռնին, որ անոնց դիակները թաղող պիտի չզտնուի: Այս նեղութեանց մէջէն ազատողներ պիտի ըլլա՞ն արդեօք:

Վերոյիշեալ կենսական հարցերուն դո՛հացուցիչ պատասխանները տրուած են «ԱԶԱՏՈՒԹՒՒՆ» կոչուած 384 էջոց, լաթակազմ գեղեցիկ հատորին մէջ: Որպէս զի այս խիստ կարեւոր գիրքը դիւրամատչելի ըլլայ հայ հասարակութեան, որոշած ենք որ անոր գինն ըլլայ՝ ՄԻԱՅՆ 35 սէնթի շնչին գումար մը, ճանապարհածախսն ալ մեր վրայ ըլլալու պայմանաւ:

Ոո՛հուն հայրենակից, ձեր եւ ձեր սիրելիներուն կենաց իրական եւ տեւական ազատագրութեան համար խիստ անհրաժեշտ է, որ ժամ առաջ օրինակ մը ձեռք ձգէք այս եզակի հատորէն, եւ զգուշութեամբ կարդաք զայն:

\* \* \*

Իրական յոյս եւ խրախոյս ներշնչող՝ դեռ ունինք 20 հատ ուրիշ հայերէն գիրքեր եւ գրքոյիներ, սակայն միջոց չկենալուն համար անոնց ցանկը հոս չենք կրցած դնել: Փափաքողներուն՝ պատրաստ ենք մեր թէ՛ հայերէն եւ թէ՛ 50-էն աւելի ուրիշ լեզուներով հրատարակած գրականութեանց լիակատար ցուցակը զրկելու:

Նամակ կամ դրամ զրկուելու է ԴԻՏԱՐԱՆ-ի անուան եւ հասցէին, որն է հետեւեալը.

THE TIDARAN  
117 Adams Street, Brooklyn, N. Y. U.S.A.



«Ազգային գրադարան»



NL0157784

ԳՄ

# ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ



# ՊԱՏԳԱՄԸ